

11/03/2008
համար 68Ն

**«ԱԶԴԱԳԻՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿԱՍՈՆԱԿԱՐԳ
4/04-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
30.12.08թ. թիվ 373 Ն, 19.01.10թ. թիվ 3 Ն, 06.07.10թ. թիվ 158 Ն, 10.12.13թ. թիվ 283 Ն,
24.02.15թ. թիվ 45 Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Հիմք ընդունելով «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և «Արժեքդրերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը, 2-րդ մասի 6-րդ կետը, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերը, 8-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 4-րդ կետը, 17-րդ հոդվածը, 18-րդ հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 119-րդ հոդվածի 2-րդ մասը, 121-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 2-րդ և 3-րդ մասերը, 126-րդ հոդվածի 2-րդ մասը, 127-րդ հոդվածի 1-ին, 4-րդ 8-րդ և 10-րդ մասերը, 207-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Հ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի «Արժեքդրերի գրանցման հայտարարագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 40-ը հաստատելու մասին» թիվ 179 Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող բրոսաների և օտարերկրյա պետությունների արժեքդրերի շուկան վերահսկող պետական մարմինների ցանկերը հաստատելու մասին» թիվ 174Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի ««Ժողովակողների, հաշվետու թողարկողների բաժնային արժեքդրերի նշանակալից կամ խոշոր սեփականատերերի և ղեկավարների կողմից գաղտնի համարվող տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացման կարգը» և «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմումի ձևը հաստատելու մասին» թիվ 80Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Տիգրան Սարգսյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 373-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/04 «ԱԶԴԱԳԻՐ ԵՎ ՀԱԾՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԵՐ»

ԲԱԺԻՆ I. ԸՆԴԱԾՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴԱԾՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է
 - 1) ազդագրի (առևտրի ազդագրի) ձևի ու բովանդակության նկատմամբ պահանջները՝ կախված արժեքորերի առանձին տեսակներից,
 - 2) «Արժեքորերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պետությունների ցանկը,
 - 3) ազդագրի (առևտրի ազդագրի) հրապարակման պահանջից բացառությունները,
 - 4) արժեքորերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության բովանդակությունը և հրապարակման կարգը,
 - 5) արժեքորերի հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության վերաբերյալ գովազդային նյութի նկատմամբ պահանջները,
 - 6) հաշվետու թողարկողների հաշվետվությունների բովանդակության, ձևի, պարբերականության և հրապարակման կարգի նկատմամբ մանրամասն պահանջները,
 - 7) հաշվետու թողարկողներին և նրանց կողմից թողարկված արժեքորերին վերաբերող էական փաստերի և տեղեկությունների հրապարակման կարգը և այդ էական փաստերի և տեղեկությունների ոչ սպառիչ ցանկը,
 - 8) թողարկողների (հաշվետու թողարկողների) կողմից գաղտնի համարվող տեղեկությունների և փաստաթորերի ներկայացման կարգը, ինչպես նաև այն տեղեկությունների ցանկը, որոնց գաղտնիությունը Կենտրոնական բանկն ամեն դեպքում բավարարում է,
 - 9) ազդագրի և հաշվետու թողարկողների հաշվետվությունների հետ կապված այլ հարաբերություններ:
2. Սույն կանոնակարգում բաժնետոմսերին վերաբերվող դրույթները կիրառելի են նաև բաժնետոմսերով անրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեքորերի նկատմամբ (այսուհետ նաև՝ բաժնետոմսերին համարժեք արժեքորեր):
3. Սույն կանոնակարգում պարտատոմսերին վերաբերող դրույթները կիրառելի են նաև պարտքային այլ արժեքորերի նկատմամբ:
4. Սույն կանոնակարգում ազդագրին վերաբերող դրույթները կիրառելի են նաև առևտրի ազդագրի նկատմամբ այնքանով, որքանով դրանք կիրառելի են առևտրի ազդագրի նկատմամբ:
5. Սույն կանոնակարգում բանկերին վերաբերող դրույթները կիրառելի են նաև վարկային կազմակերպությունների նկատմամբ: Սույն կանոնակարգով սահմանված պահանջները

տարածվում են բողարկողների բոլոր խճերի վրա այնքանով, որքանով դրանք կիրառելի են նրանց նկատմամբ:

5.1. Սույն կանոնակարգի 5-րդ և 6-րդ բաժիններով սահմանված դրույթները չեն տարածվում սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպությունների թողարկած ոչ բաժնային արժեթղթերի վրա, եթե կոնկրետ իրավական նորմի բովանդակությունում ուղղակիորեն նշված չէ, որ այն վերաբերում է վերոնշյալ միջազգային կազմակերպություններին:

(5.1. կետը լրաց. 10.12.13թ. թիվ 283 Ն)

6. Թողարկողը, տեղաբաշխողը կամ կարգավորվող շուկայի առևտրին թույլտվություն հայցող անձն ի լրումն սույն կանոնակարգով պահանջվող տեղեկատվության կարող են ազդագրում ներառել նաև այլ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

- 1) «Օրենք». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- 2) «Կառավարման մարմին». խորհուրդ (տնօրենների խորհուրդ, դիտորդ խորհուրդ) և (կամ) գործադիր մարմին (կողեզգիալ գործադիր մարմին՝ վարչություն, տնօրինություն և (կամ) միանձնյա գործադիր մարմին՝ տնօրեն, գլխավոր տնօրեն, գործադիր մարմին՝ լիազորությունները այլ անձի պատվիրակվելու դեպքում՝ կառավարող ընկերություն կամ կառավարիչ),
- 3) «Կառավարման մարմնի անդամ». Խորհրդի նախագահ, խորհրդի անդամներ, գործադիր մարմնի ղեկավար և անդամներ, տնօրեննի տեղակալ, գլխավոր տնօրեննի տեղակալ, գործադիր տնօրեննի տեղակալ, գլխավոր հաշվապահ, գործադիր մարմնի լիազորությունները այլ անձի պատվիրակվելու դեպքում՝ կառավարող ընկերության գործադիր մարմնի ղեկավար կամ կառավարիչ),
- 4) «Պատասխանատու անձինք». բոլոր այն անձինք, ովքեր պատասխանատու են ազդագրում ներառվող տեղեկությունների (կամ ազդագրի որոշակի մասերի) ճշգրտության և լիարժեքության համար: Պատասխանատու անձինք են Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ազդագիրը ստորագրող անձինք և անփոփաքերթի կազմնան համար պատասխանատու անձը, ինչպես նաև, առկայության դեպքում, տեղաբաշխողը և երաշխավորը, բացառությամբ ԲԱԺԻՆ V-ի: ԲԱԺԻՆ V-ում նշված պատասխանատու անձինք են համապատասխան կառավարման մարմնները և(կամ) կառավարման մարմինների անդամները,
- 5) «Խոշոր բաժնետեր». անձ, որն ուղարկորեն կամ անուղակիորեն, անձամբ կամ փոխկապակցված անձանց միջոցով ունի բողարկողի կանոնադրական կապիտալով ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասմակցություն,
- 6) «Քննականն գործունեություն». ընկերության կողմից իր հիմնական գործունեության շրջանակում սովորաբար իրականացվող գործունեություն կամ գործադրներ: Բանկերի համար հիմնական գործունեությունը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված գործառնություններն են: Ներդրումային ընկերությունների համար հիմնական գործունեությունը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածներում նշված ծառայություններն են: Վարկային կազմակերպությունների համար հիմնական գործունեությունը «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածում նշված գործառնություններն են,

- 7) «**Չափոյթի կանխատեսում**». նշանակում է շափոյթի կամ վճասի հավանական նվազագույն կամ առավելագույն մեծության կանխատեսում ընթացիկ կամ հետագա հաշվետու ժամանակաշրջանների համար,
- 8) «**Չափոյթի գնահատում**». նշանակում է շափոյթի հաշվարկ այն հաշվետու ժամանակաշրջանի համար, որն ավարտվել է, սակայն որի մասով արդյունքները դեռևս չեն հրապարակվել,
- 9) «**Հաշվետու ժամանակաշրջան**». ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության: Հաշվետու ժամանակաշրջաններ կարող են լինել հաշվետու տարին և միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանները (հաշվետու կիսամյակը և հաշվետու եռամյակը),
- 10) «**Պատմական ֆինանսական ժամանակաշրջան**». բաժնետոմսերի դեպքում՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 3 հաշվետու տարիները (կամ ավելի պակաս, եթե բողարկողի գործունեության ժամկետը պակաս է 3 տարուց), որոնց համար բողարկողը կազմել է ֆինանսական հաշվետվություններ, իսկ պարտատոմսերի և ածանցյալ արժեթղթերի դեպքում՝ ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 2 հաշվետու տարիները (կամ ավելի պակաս, եթե բողարկողի գործունեության ժամկետը պակաս է 2 տարուց), որոնց համար բողարկողը կազմել է ֆինանսական հաշվետվություններ,
- 11) «**Ֆինանսական հաշվետվություն**». ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված ֆինանսական հաշվետվությունների կազմի, տվյալ հաշվետու բողարկողի համար սահմանած հաշվային պլանի, տարեկան և միջանկյալ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի, այդ ձևերը լրացնելու հրահանգների,
- 12) «**Գործարքի արդար գին**». գործարքի առարկայի (այդ թվում՝ ծառայության) շուկայական գին, իսկ դրա բացակայության դեպքում՝ այն գինը որով գործարքի առարկայի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայներ վաճառել այդ առարկան, իսկ գործարքի առարկայի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայներ այդ առարկան ձեռք բերել: Գործարքի արդար գնի որոշման համար բողարկողը իրավասու մարմնի որոշմանը կարող է օգտվել նաև անկախ գնահատողի ծառայություններից,
- 13) «**Ոխակային գործոններ**». նշանակում է այն ոխակերի ցանկը, որոնք հատուկ են բողարկողի տվյալ իրավիճակին և (կամ) արժեթղթերին, և որոնք ողջամիտ ներդրողը կկարենու ներդրումային որոշումներ կայացնելիս,
- 14) «**Ծովակայական ռիսկ**». տոկոսադրույթների, արժեթղթերի գների և (կամ) արժութային փոխարժեքների տատանումների արդյունքում վնաս կրելու հավանականությունն է,
- 15) «**Ածանցյալ արժեթուղթ**». ըստ Օրենքի «ածանցյալ գործիք» հասկացության,
- 16) «**Ֆինանսական վիճակի կամ շափութարերության վրա էական ազդեցություն (ֆինանսական վիճակի էական փոփոխություն)**». նշանակում է բողարկողի ֆինանսական վիճակը կամ շափութարերությունը բնութագրող հետևյալ ցուցանիշներից որևէ մեկի 5 և ավելի տոկոսով փոփոխություն վերջին հաշվետու ժամանակաշրջանի համեմատ.
- ա. բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների

համար.

1. Սեփական կապիտալ
2. Ընդհանուր ակտիվներ
3. Ընդհանուր պարտավորություններ
4. Չուտ շահույթ (վճառ) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը
5. Չուտ տոկոսային եկամուտ
6. Գործառնական եկամուտ

բ. այլ կազմակերպությունների համար.

1. Սեփական կապիտալ
2. Ընհանուր ակտիվներ
3. Ընթացիկ ակտիվներ
4. Ոչ ընթացիկ ակտիվներ
5. Ընդհանուր պարտավորություններ
6. Ընթացիկ պարտավորություններ
7. Ոչ ընթացիկ պարտավորություններ
8. Չուտ շահույթ (վճառ) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը:

17) «**Էական ներդրումներ».** այն ներդրումները, որոնք գերազանցում են վերջին հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 5 և ավելի տոկոսը,

18) «**Երաշխավորություն».** ցանկացած համաձայնություն (անկախ դրա ձևից), որն ուղղված է թողարկողի պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարման ապահովմանը: Որպես այդպիսի համաձայնություններ կարող են հանդես գալ երաշխավորությունները, երաշխիքները, վճարունակության ապահովում նախատեսող պայմանագրերը, վճարունակության ապահովման գծով ապահովագրական պայմանագրերը և այլ նմանատիպ համաձայնությունները: Երաշխավորը երաշխավորություն տվող անձն է:

(7-րդ կետը փոխվել է 06.07.10թ. թիվ 158 Ն որոշմամբ):

8. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ II. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 3. ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ԲԱԺՆՈՎ (ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԵ) ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Օրենքի 2-րդ բաժնի դրույթները չեն տարածվում.

- 1) սույն կանոնակարգի Հավելված 1-ում սահմանված օտարերկրյա պետությունների, նրանց կենտրոնական բանկերի կամ տեղական կառավարման մարմինների կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերի վրա,
- 2) սույն կանոնակարգի Հավելված 2-ում սահմանված միջազգային կազմակերպությունների թողարկած ոչ բաժնային արժեթղթերի վրա, կամ
- 3) բանկերի կողմից շարունակական ձևով թողարկվող ոչ բաժնային արժեթղթերի վրա, եթե առաջարկվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 200 միլիոն դրամը և դրանք ա. փոխարկելի կամ փոխանակելի չեն, և
բ. չեն հավաստում որևէ այլ տեսակի արժեթղթերի ձեռքբերման կամ

բաժանորդագրման իրավունքներ, ինչպես նաև կապված չեն ածանցյալ գործիքների հետ,

- 4) Օրենքով սահմանված այլ դեպքերի վրա:

ԳԼՈՒԽ 4. ԱԶԴԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՁԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Ազդագրի հրապարակման պահանջը չի տարածվում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հետևյալ հրապարակային առաջարկների վրա.
- 1) Եթե առաջարկն արվում է այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող արժեքրերի ընդհանուր արժեքը, վաճառքի գնով առաջարկի պայմանների համաձայն, գերազանցում է 20 միլիոն դրամը՝ յուրաքանչյուր առանձին առաջարկի դեպքում,
 - 2) Եթե առաջարկվող արժեքրերի միավոր անվանական արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը, կամ
 - 3) Եթե առաջարկվող արժեքրերի ընդհանուր արժեքը թողարկման կամ վաճառքի գնով 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 40 միլիոն դրամը,
 - 4) Օրենքով սահմանված այլ դեպքերի վրա:
11. Ազդագրի հրապարակման պահանջը չի տարածվում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հետևյալ արժեքրերի հրապարակային առաջարկի վրա.
- 1) Եթե առաջարկվող արժեքրերը թույլատրված են առևտրին սույն կանոնակարգի **Error! Reference source not found.**—ում սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ կարգավորվող շուկայում՝ տվյալ շուկայի կանոններով սահմանված կարգով,
 - 2) Օրենքով սահմանված այլ դեպքերի վրա:

ԳԼՈՒԽ 5. ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՁԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Առևտրի ազդագրի հրապարակման պահանջը չի տարածվում Օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված այն արժեքրերի վրա, որոնք թողարկվել են շուկայում առևտրին արդեն իսկ թույլատրված բաժնետոմսերի թողարկողի կողմից, եթե առաջարկվող արժեքրերի ընդհանուր անվանական արժեքը 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 1 մլրդ դրամ:

ԳԼՈՒԽ 6. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԴԵՊՈՒՄՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Թողարկողը Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առաջարկների դեպքում արժեքրերի տեղաբաշխումն ավարտելուց հետո 15 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ում սահմանված տեղեկացման ձևի:

**ԳԼՈՒԽ 7. ԱՌԱՆՑ ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ՀՐԱՊԱՐԱԿՍԱՆ՝
ԸԱՀԱԳՐԳԻՌ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍԱՏԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ
(ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ)
ԴԵՊՔՈՒՄՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ԴԻՄՈՒՄԻ ԶԵՎՀ ԵՎ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՑԱՆԿԸ**

14. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով կամ 121-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթի հիման վրա արժեթղթերի հրապարակային առաջարկի իրականացման մտադրություն ունեցող բողարկողը կամ տեղաբաշխողը կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու մտադրություն ունեցող բողարկողը (արժեթղթերի՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձը) նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում՝
- 1) դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,
 - 2) հրապարակային առաջարկի (կարգավորվող շուկայի առևտրին թույլտվություն ստանալու) շարժադրիները,
 - 3) շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթը կամ փաստաթղթերը, որը ներառում է ազդագրով (առևտրի ազդագրով) պահանջվող տեղեկատվությանը համարժեք տեղեկատվություն։ Եթե նախկինում այդ փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացվել է Կենտրոնական բանկ, ապա այդ փաստաթղթերը կրկին չեն ներկայացվում։ Այս պարագայում Կենտրոնական բանկը պետք է տեղեկացվի, թե նախկինում ներկայացված որ փաստաթղթերի մասին է խոսքը,
 - 4) տեղեկատվություն այն մասին, թե ինչ եղանակով են փաստաթղթերը մատչելի դարձվել շահագրգիռ ներդրողներին,
 - 5) բողարկողի կանոնադրության պատճենը,
 - 6) արժեթղթերի բողարկման, տեղաբաշխման կամ կարգավորվող շուկայի առևտրին թույլտվություն ստանալու մասին իրավասու մարմնի որոշման արձանագրության պատճենը,
 - 7) պատասխանատու անձանց հավաստիացումն առ այն, որ ձեռնարկել են բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզեն շահագրգիռ ներդրողներին հասանելի փաստաթղթում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը և, ըստ այդմ, իրենց լավագույն տեղեկացվածության համաձայն փաստաթղթում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են և չեն պարունակում բացքողումներ։ Այս հավաստիացումը պետք է ստորագրվի պատասխանատու անձանց կողմից (եթե պատասխանատու անձն իրավաբանական անձ է՝ ապա նրա գործադիր մարմնի ղեկավարի կողմից),
 - 8) բողարկողի կամ տեղաբաշխողի ցանկությամբ այլ տեղեկատվություն կամ փաստաթղթեր։

ԲԱԺԻՆ III. ԱԶԴԱԳՐԻ ԶԵՎՀ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 8. ԱԶԴԱԳՐԻ ԶԵՎՀ

15. Ազդագիրը կազմված է.
- 1) Ազդագրի դիմային էջից,
 - 2) «Քովանդակություն» մասից,
 - 3) «Պատասխանատու անձինք» մասից,
 - 4) Ամփոփաբերքից,
 - 5) Արժեքորդի մասին տեղեկատվությունից,
 - 6) Արժեքորդեր բողարկողների մասին տեղեկատվությունից:

ԳԼՈՒԽ 9. ԱԶԴԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԱՎԱՋԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

16. Ազդագրի դիմային էջը առնվազն պետք է ներառի.
- 1) Թողարկողի անվանումը,
 - 2) Արժեքորդի տեսակը և «ԱԶԴԱԳԻՐ» կամ «ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐ» բառերը,
 - 3) Գլխավոր տեղաբաշխողի անվանումը,
 - 4) դրույթ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԶԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ճԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻԿՈՒԹՅՈՒՆԸ»:
17. «Քովանդակություն» մասը պետք է պարզ և մատչելի ձևով արտացոլի ազդագրի բովանդակությունը:
18. «Պատասխանատու անձինք» մասում ներկայացվում են.
- 1) պատասխանատու ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, գործադիր մարմնի դեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը: Եթե որևէ անձ պատասխանատու է ազդագրի միայն որոշակի մասերի համար, ապա պետք է նշում կատարվի այդ մասին,
 - 2) դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադիր ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացքողումներ, որոնք կարող են խեղաքութել ազդագրի բովանդակությունը»:
19. Ամփոփաբերքը պետք է պարունակի ոչ տեխնիկական և ազդագրի բնօրինակին համապատասխան ոճով և լեզվով հակիրճ նկարագրված էական տեղեկատվությունը բողարկողի, նրա հետ կապված ոիսկերի, ֆինանսական վիճակի և գործունեության հեռանկարների, երաշխավորի (առկայության դեպքում) և առաջարկվող արժեքորդերի վերաբերյալ: Ամփոփաբերքը պետք է բաղկացած լինի մինչև 2500 բառից: Ամփոփաբերքի օրինակելի բովանդակությունը ներկայացված է **Error! Reference source not found.-ում:** Այդ օրինակելի բովանդակությունը կարող է ծառայել որպես ուղեցույց ամփոփաբերքի կազմման համար:
20. Ամփոփաբերքը պետք է պարունակի նախազգուշական դրույթ առ այն, որ
- 1) ամփոփաբերքը պետք է դիտվի որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեքորդերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա,
 - 2) ամփոփաբերքի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաբերքում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ բարգմանությանը վերաբերող մասով) կրում է բաղաքացիական

պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

21. Արժեքագրի և արժեքագրերի քողարկողների մասին տեղեկատվությունը սույն կանոնակարգի Հավելված 7-ից Հավելված 14-ով պահանջվող տեղեկություններն են՝ կախված արժեքագրի և քողարկողների առանձին տեսակներից: Այդ տեղեկությունները ազդագրում են սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 10-ից ԳԼՈՒԽ 15-ով սահմանված կարգով:

**ԳԼՈՒԽ 10. ԲԱԺՆԵՏՈՍՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԿԱՄ
ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԾՈՒԿԱՅՈՒՄԱՌԵՎՏԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ԴԵՊՋՈՒՄԲԱԺՆԵՏՈՍՍԵՐԻ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՍԱՍԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

22. Բաժնետոսմերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 7-ի:
23. Բաժնետոսմեր քողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի:

ԳԼՈՒԽ 11. ՊԱՐՏԱՏՈՍՍԵՐԻ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

24. Պարտատոմման մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 9-ի:
25. Պարտատոմման քողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 10-ի:

**ԳԼՈՒԽ 12. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՍԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԻ ՍԱՍԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

26. Բանկի պարտատոմման մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 9-ի:
27. Բանկի կողմից պարտատոմման իրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության դեպքում բանկի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 11-ի, սակայն բանկն իր հայեցողությամբ կարող է իր մասին տեղեկատվությունը ներկայացնել ըստ Հավելված 10-ի:

**ԳԼՈՒԽ 13. ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ
ԹՈՂԱՐԿՈՂԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

28. Ածանցյալ արժեքագրի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 12-ի:
29. Ածանցյալ արժեքագրերի քողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 10-ի:

**ԳԼՈՒԽ 14. ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ՓՈԽԱՐԿՎՈՂ ԿԱՄ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ
ԴԵՊՋՈՒՄԱԶԴԱԳՐՈՒՄՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

30. Բաժնետոմսերի փոխարկվող կամ փոխանակվող արժեթղթերի հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում առևտության բույլտվության դեպքում ազդագրում ներառվող տեղեկատվության առանձնահատկությունները սահմանվում են սույն կանոնակարգի 31-րդ կետով։ Բաժնետոմսերի փոխարկվող կամ փոխանակվող արժեթղթերն են այն արժեթղթերը, որոնք բավարարում են հետևյալ պայմաններին՝
- 1) թողարկողի կամ ներդրողի կամահայտնությամբ կամ թողարկման պայմաններով կարող են փոխանակվել կամ փոխարկվել բաժնետոմսերի կամ բաժնետոմսերին համարժեք այլ արժեթղթերի, կամ որևէ այլ կերպ հնարավորություն տան ձեռքբերել բաժնետոմսեր կամ բաժնետոմսերին համարժեք այլ արժեթղթեր (այսուհետ նաև՝ հիմքում ընկած բաժնետոմս), և
 - 2) հիմքում ընկած բաժնետոմսերը թողարկվել կամ թողարկվելու են տվյալ թողարկողի կամ թողարկողի խմբի մեջ մտնող այլ թողարկողի կողմից և հիմքում ընկած բաժնետոմսերը ազդագրի գրանցման պահին չեն վաճառվում կարգավորվող շուկայում։
31. Բաժնետոմսերի փոխարկվող կամ փոխանակվող արժեթղթերի դեպքում ազդագրում ներառվող տեղեկատվությունը ներկայացվում է հետևյալ կերպ։
- 1) եթե հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում առևտության բույլտվության առարկա արժեթղթերը բաժնետոմսեր են, ապա
 - ա. բաժնետոմսերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 7-ի,
 - բ. բաժնետոմսեր թողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի,
 - գ. հիմքում ընկած բաժնետոմսերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 13-ի,
 - դ. բաժնետոմսեր թողարկողի խմբի մեջ մտնող այլ թողարկողի կողմից հիմքում ընկած բաժնետոմսերը թողարկելու դեպքում՝ խմբի մեջ մտնող այդ թողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի։
 - 2) եթե հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում առևտության բույլտվության առարկա արժեթղթերը պարտատոմսեր են, ապա
 - ա. պարտատոմսերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 9-ի,
 - բ. պարտատոմսեր թողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի,
 - գ. հիմքում ընկած բաժնետոմսերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 13-ի,
 - դ. պարտատոմսեր թողարկողի խմբի մեջ մտնող այլ թողարկողի կողմից հիմքում ընկած բաժնետոմսերը թողարկելու դեպքում՝ խմբի մեջ մտնող այդ թողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի։
 - 3) եթե հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում առևտության բույլտվության առարկա արժեթղթերը բանկի կողմից թողարկվող պարտատոմսեր են, ապա
 - ա. բանկի պարտատոմսերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 9-ի,
 - բ. բանկի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի,
 - գ. հիմքում ընկած բաժնետոմսերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ

- Հավելված 13-ի,
- դ. բանկի խմբի մեջ մտնող այլ քողարկողի կողմից հիմքում ընկած բաժնետոմսերը քողարկելու դեպքում՝ խմբի մեջ մտնող այդ քողարկողի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Հավելված 8-ի:

ԳԼՈՒԽ 15. ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

32. Եթե արժեքորերով նախատեսված պարտավորությունները երաշխավորված են երաշխավորողի կողմից, ապա ի լրումն ԳԼՈՒԽ 10-ից ԳԼՈՒԽ 14-ով սահմանված տեղեկատվության, ազդագլում ներկայացվում է նաև տեղեկատվություն երաշխավորության մասին՝ ըստ Հավելված 14-ի:

**ԲԱԺԻՆ IV. ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԶԵՎԸ, ՀԱՅՏԻՆ ԿԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԵՐԸ ԵՎ ԱԶԴԱԳԻՐԸ (ԱՌԵՎՏՐԻ
ԱԶԴԱԳՐԻ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

ԳԼՈՒԽ 16. ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԶԵՎԸ ԵՎ ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԵՐԸ

33. Ազդագրի (առևտրի ազդագրի) գրանցման հայտի ձևը սահմանված է Հավելված 15-ում: Ի լրումն Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստարդերի, քողարկողը կամ տեղաբաշխողը հայտին կից Կենտրոնական բանկ է ներկայացնում նաև բաժնետոմսերի (պարտատոմսերի) քողարկման, տեղաբաշխման (կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալու) մասին իրավասու մարմնի որոշման պատճենը:

ԳԼՈՒԽ 17. ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳՐԻ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Ազդագիրը Կենտրոնական բանկ է ներկայացվում թղթային (1 օրինակ) և էլեկտրոնային տարրերակներով: Էլեկտրոնային տարրերակով ազդագիրը ներկայացվում է էլեկտրոնային փոստով (առկայության դեպքում՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով), մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով: Ազդագրի էլեկտրոնային տարրերակը ներկայացվում է PDF ֆորմատով, իսկ ֆայլի անվանումը կողավորվում է հետևյալ ձևով՝ XXXXX.pdf, որտեղ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից քողարկողին շնորհված կողմն է, իսկ pdf-ը՝ ֆայլի ֆորմատը: Եթե քողարկողը չունի Կենտրոնական բանկի կողմից շնորհված կող, ապա ֆայլի անվանումը նախապես բանավոր ձևով համաձայնեցվում է Կենտրոնական բանկի՝ ազդագրերի գրանցման համար պատասխանատու ստորաբաժանման հետ: Այս ֆայլերը պետք է լինեն պաշտպանված, որպեսզի հնարավոր չինի նրանում ներառված տեղեկատվությունում կատարել որևէ փոփոխություն:
35. Եթե մինչև Կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցման օրը անհրաժեշտություն է առաջանում ազդագրում կատարել փոփոխություններ կամ լրացնուեր, ապա այդ լրացված կամ փոփոխված մասը ներառող համապատասխան էջերը ներկայացվում են

Կենտրոնական բանկ՝ միաժամանակ նշելով, թե որ էջերի փոխարեն են ներկայացվում նոր էջերը: Այդ էջերը ներկայացվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ սույն կանոնակարգի 34-րդ կետում սահմանված կարգով:

36. Կենտրոնական բանկի կողմից ազդագիրը (որի մեջ արդեն ներառված են լրացված կամ փոփոխված էջերը) գրանցելուց հետո ազդագրի բնօրինակի և պատճենի դիմային էջերին կատարվում է «ԳՐԱՆՑՎԱԾ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ» նշագրումը, նշվում է գրանցման օրը, ամիսը, տարին և կնքվում է Կենտրոնական բանկի կնիքով: Այնուհետև գրանցված ազդագրի վերոնշյալ պատճենն առնեն փոխանցվում է թողարկողին, տեղաբաշխողին կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձին:
37. Թողարկողը, տեղաբաշխողը կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն հայցող անձը մինչև ազդագրի հրապարակումը, բայց ոչ ուշ գրանցումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում գրանցված ազդագրի PDF ֆորմատով էլեկտրոնային տարրերակը՝ սույն կանոնակարգի 34-րդ կետում սահմանված կարգով (բացառությամբ, եթե առաջին անգամ ներկայացված ազդագրում մինչև դրա գրանցման պահը որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել): Ընդ որում, այս տարրերակը պետք է լինի համարակալված և ներառի բոլոր այն լրացումները և փոփոխությունները, որոնք ներկայացված են եղել մինչև գրանցումը: Ազդագրի այս վերջնական տարրերակն է միայն ենթակա հրապարակման:

ԲԱԺԻՆ V. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 18. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Բոլոր հաշվետու թողարկողները (բացառությամբ Օրենքի 126-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված թողարկողների) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը ներառյալ հրապարակում են տարեկան հաշվետվություն և պետք է ապահովեն դրա հրապարակայնությունը առնվազն 5 տարի:
39. Տարեկան հաշվետվությունը կազմված է հետևյալ մասերից.
- 1) անկախ առդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություն,
 - 2) կառավարման մարմինների տարեկան գեկույց, և
 - 3) թողարկողի համապատասխան պատասխանատու անձանց հայտարարությունն այն մասին, որ իրենց լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատերը, իսկ կառավարման մարմինների տարեկան գեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ուսուերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս հայտարարության մեջ պետք է առանձին նշվի յուրաքանչյուր պատասխանատու անձի առնենք ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գործադիր մարմնի դեկանարի անունը, ազգանունը), պաշտոնը և պատասխանատվության շրջանակը:

40. Տարեկան ֆինանսական հաշվետվությանը կցվում է անկախ առդիտորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ (ցանկության դեպքում կարելի է կցել այդ եզրակացության պատճենը):

41. Կառավարման մարմինների տարեկան գեկույցը առնվազն պետք է ներառի.

- 1) բողարկողի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է բողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի բողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել բողարկողի ընդհանուր վիճակի, բիզնեսի արդյունքների և զարգացման մասին՝ ներառելով բողարկողի բիզնեսին յուրահասուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը,
- 2) այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև գեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել բողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք բողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամտ ներդրողը կկարևորեք ներդրումային որոշումներ կայացնելիս,
- 3) բողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

41.1 Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպություններն անկախ առողջության եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում այն կառուցվածքով և ժամկետում, որոնք, որպես կանոն, կիրառվում են միջազգային կազմակերպությունների կողմից այլ կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալու դեպքում:

(41.1. կետը լրաց. 10.12.13թ. թիվ 283 Ն)

ԳԼՈՒԽ 19. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42. Այն հաշվետու բողարկողները, որոնց բաժնետոմսերը թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, հրապարակում են եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ՝ հաշվետու եռամսյակի ավարտից հետո 45 օրվա ընթացքում, և պետք է ապահովեն դրա հրապարակայնությունն առնվազն 5 տարի:
43. Այն հաշվետու բողարկողները, որոնց պարտատոմսերը թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, հրապարակում են կիսամյակային միջանկյալ հաշվետվություն՝ առաջին կիսամյակի ավարտից հետո 2 ամսվա ընթացքում, և պետք է ապահովեն դրա հրապարակայնությունն առնվազն 5 տարի: Եթե սույն կետում նախատեսված հաշվետու բողարկողները բողարկել են նաև բաժնետոմսեր, որոնք թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, չեն ներկայացնում կիսամյակային միջանկյալ հաշվետվություն:
44. Միջանկյալ հաշվետվությունը կազմված է հետևյալ մասերից:
 - 1) միջանկյալ ֆինանսական հաշվետվություն (ընդ որում՝ հաշվետու բողարկող հանդիսացող բանկերը միջանկյալ ֆինանսական հաշվետվությունը հրապարակում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով սահմանված ժամկետում),
 - 2) կառավարման մարմինների միջանկյալ գեկույց, և
 - 3) բողարկողի համապատասխան պատասխանատու անձանց հայտարարությունն այն մասին, որ իրենց լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են բողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ

գեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են: Այս հայտարարության մեջ պետք է առանձին նշվի յուրաքանչյուր պատասխանատու անձի անունը ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գործադիր մարմնի դեկավարի անունը, ազգանունը), պաշտոնը և պատասխանատվության շրջանակը:

(44-րդ կետը փոխվել է 06.07.10թ. թիվ 158 Ն որոշմամբ):

45. Կառավարման մարմինների միջանկյալ գեկույցը առնվազն պետք է ներառի.
- 1) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է թողարկողը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք ենկան ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս,
 - 2) թողարկողի հետագա հնարավոր գարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:
- 45.1 Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպությունները միջանկյալ հաշվետվությունները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում այն կառուցվածքով և ժամկետում, որոնք, որպես կանոն, կիրառվում են միջազգային կազմակերպությունների կողմից այլ կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալու դեպքում:
- (45.1. կետը լրաց. 10.12.13թ. թիվ 283 Ն)

ԳԼՈՒԽ 20. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

46. Ոչ բանկ հաշվետու թողարկողները տարեկան և միջանկյալ հաշվետվությունների հրապարակման ներկայացնելու կամ հրապարակելու օրը դրանց էլեկտրոնային տարբերակները ներկայացնում են Կենտրոնական բանկ ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ առկայության դեպքում Սի-Բի-Էյ-ներ համակարգի միջոցով: Այդ համակարգերի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային փոստով կամ մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով համակարգի խափանման վերաբերյալ գրություն: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են պաշտպանված ֆայլերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսական հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև այլ ձևերով՝ Կենտրոնական բանկի հետ նախնական համաձայնեցմամբ: Սույն կետի խախտմամբ ներկայացված հաշվետվությունը համարվում է չներկայացված:
- (46-րդ կետը փոխվել է 06.07.10թ. թիվ 158 Ն որոշմամբ):

46.1. Հաշվետու թողարկող հանդիսացող բանկերի տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 3-ով սահմանված ժամկետում և կարգով: Տարեկան և միջանկյալ հաշվետվություններում

ընդգրկվող այլ տեղեկությունների Կենտրոնական բանկ ներկայացումը իրականացվում է սույն կանոնակարգի 46-րդ կետի համաձայն:

(46.1 կետը լրաց. 06.07.10թ. թիվ 158 Ն)

46.2. Տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետությունների հրապարակման օրը հաշվետու թողարկող հանդիսացող բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում ծանուցում տվյալ հաշվետվությունների հրապարակման ժամկետների և աղբյուրների մասին:

(46.2 կետը լրաց. 06.07.10թ. թիվ 158 Ն)

46.3 Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպությունները սույն կանոնակարգի 41.1-րդ և 45.1-րդ կետերի համաձայն հրապարակված տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակման ներկայացնելու կամ հրապարակելու օրը ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում են Կենտրոնական բանկին այդ մասին՝ ներկայացնելով նաև դրանց հրապարակման հասցեն:

(46.3 կետը լրաց. 10.12.13թ. թիվ 283 Ն)

47. Կենտրոնական բանկը հրապարակում է սույն կանոնակարգի 46-րդ, 46.1-րդ և 46.2-րդ կետերի համաձայն ստացված հաշվետվությունները, ծանուցումներն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ դրանց ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

(47-րդ կետը փոխ. 06.07.10թ. թիվ 158 Ն, 10.12.13թ. թիվ 283 Ն)

ԳԼՈՒԽ 21. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

48. Հաշվետու թողարկողը պետք է հրապարակի տարեկան և միջանկյալ հաշվետվությունները՝ ապահովելով հետևյալ պայմանները.

- 1) Հաշվետվությունները պետք է առնվազն հրապարակվեն հաշվետու թողարկողի ինտերնետային կայքում,
- 2) Հրապարակված հաշվետվությունների բովանդակությունը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների բովանդակությանը,
- 3) Կենտրոնական բանկի պահանջի դեպքում հաշվետու թողարկողը պետք է կարողանա ապացուցել հաշվետվությունների հրապարակման փաստը և կոնկրետ ժամանակը:

ԳԼՈՒԽ 22. ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Հաշվետու թողարկողները տարեկան հաշվետվությունը հրապարակելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում են հաշվետու տարվա ընթացքում

իրենց կողմից հրապարակված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն։ Հաշվետվությունն առնվազն հրապարակվում է հաշվետու թողարկողի ինտերնետային կայքում։

ԲԱԺԻՆ VI. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 23. ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ՍՊԱՌԻՉ ՑԱՆԿԸ

50. Հաշվետու թողարկողներին և իր կողմից թողարկված արժեթղթերին վերաբերող էական փաստերի և տեղեկությունների ոչ սպառից ցանկը հետևյալն է։
- 1) թողարկողի ընդհանուր ժողովի և կառավարման մարմինների ընդունած որոշումները
 - ա. կանոնադրական կապիտալի փոփոխության վերաբերյալ,
 - բ. նոր արժեթղթերի թողարկման վերաբերյալ,
 - գ. արժեթղթերից բխող իրավունքների և դրանց իրականացման գործընթացի փոփոխության վերաբերյալ,
 - դ. արժեթղթերի հատկանիշների (անվանական արժեք, ձև, դաս և այլն) փոփոխության վերաբերյալ,
 - ե. սեփական բաժնետոմսերի հետգնման և (կամ) հետգնված բաժնետոմսերի վաճառքի վերաբերյալ, ինչպես նաև սեփական բաժնետոմսերի ձեռքբերման վերաբերյալ,
 - զ. շահութաբաժինների վճարման վերաբերյալ,
 - է. թողարկված արժեթղթերը ֆոնդային բորսայում ցուցակման համար ֆոնդային բորսա դիմումի ներկայացման վերաբերյալ, ինչպես նաև ապացուցակման վերաբերյալ,
 - ը. թողարկողի կառավարման մարմինների անդամների փոփոխության վերաբերյալ,
 - թ. թողարկողի վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ,
 - ժ. թողարկողի նկատմամբ սնանկության վարույթի հարուցելու նպատակով դատարան միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ,
 - ժա. անկախ առողջատորական եզրակացության փոփոխության վերաբերյալ,
 - ժթ. մասնաճյուղի կամ ներկայացուցչության բացման և գործունեության դադարեցման վերաբերյալ,
 - ժգ. հիմնական գործունեության բնույթի փոփոխության վերաբերյալ,
 - ժդ. թողարկողի ընդհանուր ժողովի և կառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների փոփոխությունների վերաբերյալ,
 - ժե. բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ։
 - 2) (2-րդ ենթակետը ուժը կորցրել է 19.01.10թ. թիվ 3-ն որոշմամբ)
 - 3) իրավասու մարմինների կողմից թողարկողին անվճարունակ ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունումը,
 - 4) դատարանի որոշումը թողարկողի նկատմամբ սնանկության վարույթի հարուցման վերաբերյալ,
 - 5) իրավասու մարմինների կողմից որոշման ընդունումը թողարկողի գործունեությունը սահմանափակելու, հիմնական գործունեության լիցենզիան կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ,
 - 6) թողարկողի կանոնադրական կապիտալի նվազումը օրենքներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված շեմից,

- 7) կապիտալի նվազագույն չափի (ամսվա միջին օրական հաշվարկով կապիտալի նվազագույն չափ սահմանվածինելու դեպքում՝ միջին օրական հաշվարկով կապիտալի նվազագույն չափի) պահանջները թողարկողի կողմից չպահպանելը,
- 8) թողարկողի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի 5 տոկոսը,
- 9) տեղի ունեցող այն բնական աղետները կամ հասարակական անհանգստությունները (գործադրությունները և այլն), որոնք անմիջական ազդեցություն ունեն թողարկողի գործունեության վրա,
- 10) թողարկողի ներգրավվածությամբ այն բոլոր դատական, արքիտրաժային կամ վարչական վարույթների նկարագիրը (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին թողարկողը տեղյակ է), որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն,
- 11) թողարկողին սեփականության իրավունքով պատկանող ակտիվների հաշվեկշռային արժեքի 1/20-րդ մասը գերազանցող չափով այլ անձանց պարտավորությունների կատարման ապահովում կամ երաշխիք տալը, նման պայմանագրերի դադարումը կամ անվավեր ճանաչումը,
- 12) այլ ընկերություններում ուղղակիորեն կամ անուղակիորեն ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցության ձեռք բերումը կամ օտարումը, նման պայմանագրերի դադարումը կամ անվավեր ճանաչումը,
- 13) եթե սույն կետի 1-5 ենթակետերով նախատեսված որոշումների ընդունման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվել է, ապա նշված որոշումների չեղյալ, առողջնչ կամ անվավեր ճանաչումը, կամ նման որոշման կասեցումը նույնապես դիտարկվում է որպես էական փաստ,
- 14) արժեթղթերից բխող իրավունքների և դրանց իրականացման գործընթացի փոփոխությունը,
- 14.1 այլ անձանց կողմից թողարկողի արժեթղթերը կանձնելու առաջարկի իրականացումը,
- 15) այլ էական փաստեր կամ տեղեկություններ:

(50-րդ կետը փոխվել է 19.01.10թ. թիվ 3Ն, 06.07.10թ. թիվ 158Ն որոշմամբ):

51. Պարտատոմսերի կամ ածանցյալ արժեթղթերի դեպքում որպես էական փաստ կամ տեղեկություն չեն համարվում սույն կանոնակարգի 50-րդ կետի 1-ին ենթակետի «ե» և «զ» պարբերություններում և 50-րդ կետի 2-րդ ենթակետում նշված փաստերը և տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 24. ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

52. Հաշվետու թողարկողը պետք է հրապարակի էական փաստերը և տեղեկությունները՝ ապահովելով հետևյալ պայմանները.
 - 1) Դրանք պետք է առնվազն հրապարակվեն հաշվետու թողարկողի ինտերնետային կայքում,

- 2) Հրապարակված էական փաստերի և տեղեկությունների բովանդակությունը և Կենտրոնական բանկ ներկայացված էական փաստերի և տեղեկությունների բովանդակությանը պետք է համապատասխանեն միմյանց,
- 3) Կենտրոնական բանկի պահանջի դեպքում հաշվետու թողարկողը պետք է կարողանա ապացուցել էական փաստերի և տեղեկությունների հրապարակման փաստը և կոնկրետ ժամանակը:
53. Այն էական փաստերը և տեղեկությունները, որոնք հանդիսանում են ներքին (ինսայդերական) տեղեկություններ, թողարկողը պետք է բացահայտի Օրենքի 163-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան այդ մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
54. Այն էական փաստերը և տեղեկությունները, որոնք չեն հանդիսանում ներքին (ինսայդերական) տեղեկություններ, թողարկողը պետք է հրապարակի այդ մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
55. Էական փաստերը և տեղեկությունները (բացառությամբ 55.1-րդ կետում սահմանված տեղեկությունների) հրապարակման ներկայացնելու կամ հրապարակելու օրը դրանց էլեկտրոնային տարբերակները ներկայացվում են Կենտրոնական բանկ ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ առկայության դեպքում Սի-Բի-Էյ-ներ համակարգի միջոցով: Այդ համակարգերի խափանման դեպքում դրանք ներկայացվում են էլեկտրոնային փոստով կամ մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով համակարգի խափանման վերաբերյալ գրություն: Ընդ որում՝ հաշվետու թողարկող հանդիսացող բանկերն այլ ընկերություններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ճայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոս մասնակցության ձեռքբերման վերաբերյալ Կենտրոնական բանկ տեղեկություններ ներկայացնելու փոխարեն այդ տեղեկությունների հրապարակման օրը սույն կետով սահմանված կարգով ներկայացնում են ծանուցում վերոնշյալ տեղեկությունների հրապարակման ժամկետի և աղբյուրների մասին:

(55-րդ կետը փոխվել է 06.07.10թ. թիվ 158 Ն որոշմամբ):

55.1. Հաշվետու թողարկող հանդիսացող բանկերը շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումների հրապարակման համար իիմք են ընդունում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով ամրագրված ժամկետը, ինչպես նաև շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումների հրապարակման օրը սույն կանոնակարգի 55-րդ կետով սահմանված կարգով Կենտրոնական բանկ են ներկայացնում ծանուցում այդ որոշումների հրապարակման ժամկետների և աղբյուրների մասին:

(55.1 կետը լրացվել է 06.07.10թ. թիվ 158 Ն որոշմամբ):

56. Կենտրոնական բանկը հրապարակում է սույն գլխի 55-րդ կետի համաձայն ստացված էական փաստերն ու տեղեկություններն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ դրանց ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

56.1. Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպություններ հանդիսացող հաշվետու թողարկողների համար էական փաստեր և տեղեկություններ են համարվում արժեթղթերի թողարկման էական պայմանները, որոնց կազմում փոփոխությունները բացահայտվում են թողարկողի ինտերնետային կայքում տվյալ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

56.2. Միջազգային կազմակերպությունները էական փաստերը և տեղեկությունները հրապարակման ներկայացնելու կամ հրապարակելու օրը ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում են Կենտրոնական բանկին այդ մասին՝ ներկայացնելով նաև դրանց հրապարակման հասցեն:

56.3. Կենտրոնական բանկը հրապարակում է սույն գլխի 56.2-րդ կետի համաձայն ստացված տեղեկացումը իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ դրա ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

(Գլուխ 24.1-ը լրաց. 10.12.13թ. թիվ 283 Ն)

ԲԱԺԻՆ VII. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 25. ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ (ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ ԳԱՂՏՆԻ ՀԱՍԱՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

57. Թողարկողը (հաշվետու թողարկողը) ազդագրում (առևտրի ազդագրում) ներառման ենթակա որևէ տեղեկատվություն կամ փաստաթուղթ իրավունք ունի համարել գաղտնի և չիրապարակել այդ տեղեկատվությունը կամ փաստաթուղթը, եթե առկա են Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով կամ Օրենքի 127-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերը: Այս դեպքում նշված տեղեկությունները ներկայացվում են միայն Կենտրոնական բանկ սույն գլխով սահմանված կարգով: Սույն գլխի ազդագրին վերաբերվող դրույթները նաև տարածվում են էական փաստերի և տեղեկությունների վրա:
 58. Ազդագրի (առևտրի ազդագրի) լրացման համար պատասխանատու անձը (այսուհետ՝ պատասխանատու անձ) կարող է գաղտնի տեղեկատվությունը ըլրացնել ազդագրում (առևտրի ազդագրում), իսկ գաղտնի փաստաթուղթը չկցել ազդագրին (առևտրի ազդագրին): Այս դեպքում ազդագրի (առևտրի ազդագրի) համապատասխան մասում (այսինքն այն մասում, որտեղ պետք է բացահայտվեր այդ տեղեկատվությունը կամ փաստաթուղթը, եթե այն չհամարվեր գաղտնի) պետք է բացահայտվի:
- 1) գաղտնի տեղեկատվության կամ փաստաթուղթի գոյության փաստը, և
 - 2) այն հանգամանքը, որ գաղտնի տեղեկատվությունը չի լրացվել ազդագրում (առևտրի ազդագրում) և այդ մասին Կենտրոնական բանկ է ներկայացվել Հավելված 16-ով սահմանված «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմում,

- 3) այն հանգամանքը, որ գաղտնի փաստաթուղթը չի կցվել ազդագրին (առևտրի ազդագրին) և ներկայացվել է միայն Կենտրոնական բանկ:
59. Թողարկողի (հաշվետու թողարկողի) կողմից գաղտնի համարվող տեղեկատվությունը կամ փաստաթուղթը պետք է պարունակի «ԳԱՂՏՆԻ ՄԱՍ» նշումը և կցվի գաղտնիությունը հարգելու մասին դիմումին:
60. Թողարկողի (հաշվետու թողարկողի) կողմից գաղտնի համարվող տեղեկատվությունը կամ փաստաթուղթը և դիմումը Կենտրոնական բանկ են ներկայացվում փակ ծրարով, որի վրա պետք է լինի.
- 1) վերևի աջ անկյունում «ԳԱՂՏՆԻ» նշագիրը և առաքողի ստորագրությունը (Եթե պատասխանատու անձն իրավաբանական անձ է, ապա պետք է նաև վավերացված լինի կնիքով (կնիքի առկայության դեպքում)),
 - 2) ներքի ձախ անկյունում՝ պատասխանատու անձի կողմից լրացված՝ փաստաթղթի ներքին գրանցման համարը,
 - 3) նշում այն մասին, թե ում է հասցեագրված,
 - 4) պատասխանատու անձի անվանումը և գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը (հասցեն)):
61. Եթե պատասխանատու անձը ներկայացնում է պետական գաղտնիք համարվող տեղեկություններ, ապա ներկայացվող փակ ծրարի վերևի աջ անկյունում «ԳԱՂՏՆԻ» նշագիրի փոխարեն պետք է լինի «ՀՈՒՅԾ ԳԱՂՏՆԻ» կամ «ՀԱՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ» նշագիրը:
62. Փակ ծրարը Կենտրոնական բանկ է ներկայացվում այն աշխատանքային օրվա ընթացքում, եթե ներկայացվում է այն ազդագիրը (առևտրի ազդագիրը), որի համապատասխան մասում բացահայտվել է գաղտնի տեղեկատվության կամ փաստաթղթի գոյության փաստը:
63. Եթե պատասխանատու անձը չի պահպանել սույն կանոնակարգով սահմանված պահանջները, ապա գաղտնիության դիմումը ենթակա չէ քննարկման, որի մասին պատասխանատու անձը տեղեկացվում է դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկացվելուց եհետ 1 աշխատանքային օրվա ընթացքում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում դիմումը համարվում է մերժված:

ԳԼՈՒԽ 26. ԱՅՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՆ ԱՄԵՆ ԴԵՊՈՒՄ ԲԱՎԱՏՐԱՐՈՒՄԸ

64. Ամեն դեպքում բավարարման է ենթակա հետևյալ տեղեկությունների գաղտնիությունը.
- 1) պետական գաղտնիք համարվող տեղեկությունները,
 - 2) բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները,
 - 3) ծառայողական տեղեկատվությունը,
 - 4) ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

ԳԼՈՒԽ 27. ԲԱՅԱՏՐԱԳՐԵՐ, ՏԵՂԵԿԱՆՁՆԵՐ ԿԱՄ ԱՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

65. Կենտրոնական բանկն իրավունք ունի թողարկողից (հաշվետու թողարկողից) կամ նրա պաշտոնատար անձանցից պահանջել թողարկողի (հաշվետու թողարկողի) վերաբերյալ

բացատրագիր, տեղեկանք կամ նման այլ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է Կենտրոնական բանկի կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակով։ Թողարկողը (հաշվետու թողարկողը) կամ նրա համապատասխան պաշտոնատար անձը գրավոր ձևով Կենտրոնական բանկ է ներկայացնում պահանջվող բացատրագիրը, տեղեկանքը և (կամ) նման այլ փաստաթուղթը՝ նշված պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի կողմից ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ։

ԳԼՈՒԽ 28. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

66. Ազդագիրը (առևտրի ազդագիրը) հրապարակելուց անմիջապես հետո, սակայն ոչ ոչ, քանի ազդագրի հրապարակմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, տեղաբաշխողն իր ինստերնետային կայքում հրապարակում է հայտարարություն հրապարակային առաջարկի վերաբերյալ հետևյալ բովանդակությամբ。
 - 1) թողարկողի անվանումը,
 - 2) առաջարկող արժեքորդի դասը, ծավալը (հրապարակման պահին առկա տեղեկատվության սահմաններում),
 - 3) հրապարակային առաջարկի նախատեսվող ժամանակահատվածը,
 - 4) դրույթ, որ ազդագիրը հրապարակվել է,
 - 5) այն հասցեները, որտեղից կարելի է ձեռք բերել ազդագիրը էլեկտրոնային տարրերակով, թղթային տարրերակով հրապարակման դեպքում նաև՝ թղթային տարրերակով ձեռքբերման աղբյուրները։
67. Հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարությունը պետք է հրապարակվի նաև ֆինանսական շուկայի մասնագիտացում ունեցող մամուլի, առնվազն 1000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլի, հեռուստատեսության կամ ռադիոյի միջոցով։

ԳԼՈՒԽ 29. ԳՈՎԱԶԴՈՒ ՆԿԱՏՄԱՍՔ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

68. Գովազդային նյութը առնվազն պետք է ներառի.
 - 1) թողարկողի անվանումը,
 - 2) արժեքորդի դասը,
 - 3) մեկ արժեքորդի անվանական արժեքը (հնարավորության դեպքում),
 - 4) արժեքորդի տեղաբաշխման կամ առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (հրապարակային առաջարկի դեպքում),
 - 5) արժեքորդի տեղաբաշխման գինը (հնարավորության դեպքում),
 - 6) եկամտաբերությունը (պարտատոմսերի դեպքում), ֆիքսված տոկոսը (արտոնյալ բաժնետոմսերի դեպքում),
 - 7) ազդագրի հրապարակման և ձեռքբերման վայրերը,
 - 8) դրույթ ազդագիրը Կենտրոնական բանկի կողմից գրանցված լինելու մասին։

ԳԼՈՒԽ 30. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱԾԽՍԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

69. Թողարկողը կամ տեղաբաշխողը արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ով հաստատված ձևի՝ կատարելով համապատասխան նշագրում:
70. Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային փոստով (առկայության դեպքում՝ Սի-Բի-Էյ-ներ համակարգի միջոցով), մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով:

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշման հաստատված
«Ազդագիր և հաշվետու քողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՉԵՆ ՏԱՐԱԾՈՒՄ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ԲԱԺՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ամերիկայի Սիացյալ Նահանգներ.
2. Ավստրալիա
3. Ավստրիա
4. Բելգիա
5. Բուլղարիա
6. Գերմանիա
7. Դանիա
8. Էստոնիա
9. Թուրքիա
10. Իսլանդիա
11. Իսպանիա
12. Իտալիա
13. Իռլանդիա
14. Լատվիա
15. Լեհաստան
16. Լիտվա
17. Լյուսեմբրուգ
18. Կիպրոս
19. Կորեա
20. Հունաստան
21. Հունգարիա
22. Ճապոնիա
23. Մալթա
24. Միացյալ Թագավորություն
25. Մեքսիկա
26. Նիդերլանդներ
27. Նոր Զելանդիա
28. Նորվեգիա
29. Շվեյչարիա
30. Շվեյցարիա
31. Չեխիա
32. Պորտուգալիա
33. Ռուսաստան
34. Ռումինիա
35. Սլովակիա
36. Սլովենիա
37. Կանադա
38. Ֆինլանդիա
39. Ֆրանսիա

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ, ՈՐՈՇՅ ՎՐԱ ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՕՐԵՆքԻ 2-ՐԴ ԲԱԺԻՆԸ (վերնագիրը փոխ. 10.12.13թ. թիվ283 Ն)

1. Արժույթի միջազգային հիմնադրամ
2. Եվրոպական կենտրոնական բանկ
3. Եվրոպական ներդրումային բանկ
4. Այլ միջազգային կազմակերպություններ, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի

2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված

«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ

4/04-ի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՐԾՈՂ
ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՆԿ, ՈՐՈՆՑՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՎՐԱ ԶԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ
ԱՉԴԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՁԸ**

1. Ամերիկյան ֆոնդային բորսա (AMEX)
2. Ավստրալիայի ֆոնդային բորսա (ASX)
3. Ամստերդամի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
4. Բեռլինի ֆոնդային բորսա (AG)
5. Բեռնի բորսա (BX)
6. Բրյուսելի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
7. Իռլանդական ֆոնդային բորսա (ISE)
8. Լիսաբոնի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
9. Լյուքսեմբուրգի ֆոնդային բորսա
10. Լոնդոնի ֆոնդային բորսա (LSE)
11. Կորեայի ֆոնդային բորսա
12. Մադրիդի ֆոնդային բորսա
13. Իտալիայի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
14. Մոնրեալի բորսա
15. Մոսկովյան բորսա (ցուցակման 1-ին մակարդակ)
16. Նագոյայի ֆոնդային բորսա (NSE)
17. Նազդաք խմբում ընդգրկված ֆոնդային բորսաներ
18. Նյու Յորքի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
19. Նոր Զելանդիայի բորսա
20. Պրահայի ֆոնդային բորսա (PSE)
21. Ճապոնիայի բորսաների խումբ (Japan Exchange Group.)
22. Վարչավայի ֆոնդային բորսա (WSE)
23. Վիեննայի ֆոնդային բորսա

24. Տոկիոյի ֆոնդային բորսա (TSE)
25. Տորոնտոյի ֆոնդային բորսա (TSX)
26. Շվեյցարիայի ֆոնդային բորսա (SIX Swiss Exchange)
27. Փարիզի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
28. Օսակայի ֆոնդային բորսա (OSE)
29. Օսլոյի ֆոնդային բորսա (OMX)
30. Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսա (FWB):

(Հավելված 3-ը խմբագրվել է 24.02.15թ. թիվ 45 Ն որոշմամբ)

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ինտերնետային կայքը, այն ֆիզիկական անձի անվանումը, ում հետ կարելի է կապվել բողարկողին առնչվող հարցերի դեպքում և նրա հեռախոսի համարը, բողարկողի համառոտ պատմությունը, ուազմավարությունը, կանոնադրական կապիտալը և վերջինիս կառուցվածքը, բիզնեսի նկարագիրը (արտադրած արտադրանքը և մատուցված ծառայությունները և այլն), կազմակերպական կառուցվածքը (եթե խմբի անդամ է, ապա նաև խմբի կառուցվածքը), բողարկողի տրամադրության տակ եղած ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը և այլն),
2. Թողարկողին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը,
3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները (խորհրդի բացատրություններն այն գործուների վերաբերյալ (կատարված դիտարկումներ, արտոնագրեր, լիցենզիաներ, իրականացված գործառնություններ, դատական հայցեր, սպասվող կազմակերպական փոփոխություններ և այլն), որոնք ունեցել են կամ ունենալու են էական ազդեցություն ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա),
4. Թողարկողի առողջականացնող անձի և խորհրդատունների ինքնության մասին համառոտ տեղեկություններ,
5. Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը (կառավարմանը մարմնի անդամների անձանց անունը, ազգանունը, գրադարանը պաշտոնը, փորձառությունը, աշխատակիցների ընդհանուր թիվը, խոշոր բաժնետերերի անունը, ազգանունը, բողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության չափը և այլն),
6. Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թուլտվության համար նախատեսված արժեթղթերի իմմնական վիճակագրական տվյալները (արժեթղթերի տեսակը, քանակը, լինդհանուր ծավալը, անվանական արժեքը, արժույթը, տոկոսադրույթը, նպատակը, սպասվող ժամանակացույցը և միջոցների օգտագործման նախատեսվող ուղիները և այլն),
7. Արժեթղթերի առաջարկի և (կամ) դրանց առևտրին թուլտվության համակողմանի նկարագիրը (արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը, վաճառող բաժնետերերը (բաժնետոմսերի ազդագրի դեպքում)),
8. Այլ էական տեղեկություններ ըստ բողարկողի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում (Թողարկողի կանոնադրության և այլ պաշտոնական

փաստաթղթերի կարևոր դրույթներ, փորձագիտական եզրակացություններ, կարևոր համաձայնագրեր, կանոնադրությանը և պաշտոնական այլ փաստաթղթերին հղումներ և այլն),

9. Ամփոփ ֆինանսական տվյալներ համաձայն Աղյուսակ 1-ի կամ Աղյուսակ 2-ի՝ կախված բողարկողի տեսակից:

Աղյուսակ 1

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների համար

Ցուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	Ժամանակա- շրջան	Ժամանակա- շրջան	Ժամանակա- շրջան
Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո			
Սեփական կապիտալի միջին մեծություն			
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %			
Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո			
Ընհանուր ակտիվների միջին մեծություն			
Ակտիվների շահութաբերություն (ROA), %			
Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո			
Գործառնական եկամուտ			
Չուտ շահույթի մարժա (NPM), %			
Գործառնական եկամուտ			
Ընհանուր ակտիվների միջին մեծություն			
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %			
Ընհանուր ակտիվների միջին մեծություն			
Սեփական կապիտալի միջին մեծություն			
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)			
Չուտ տոկոսային եկամուտ			
Եկամտաքեր ակտիվների միջին մեծություն			
Չուտ տոկոսային մարժա (NIM)			
Տոկոսային եկամուտ			
Եկամտաքեր ակտիվների միջին մեծություն			
Եկամտաքեր ակտիվների			
Եկամտաքերություն			

Տոկոսային ծախսեր

Պարտավորություններ, որոնց գծով
կատարվում են տոկոսային ծախսեր

Ծախսատարություն այն
պարտավորությունների, որոնց գծով
կատարվում են տոկոսային ծախսեր

Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի
նվազեցումից հետո

Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով
(EPS)

Սպրեդ

Այսուակներում ժամանակաշրջանները լրացնելիս պետք է ընտրել հնարավորինս վերջին ժամանակաշրջանները։ Որպես ժամանակաշրջաններ կարող են ընտրվել ինչպես տարին, այնպես էլ եռամյակները։ Եթե որևէ ժամանակաշրջանի համար լրացվող տվյալները առողջությունը հաստատված չեն, ապա այդ մասին պետք է նշում կատարվի։ Համապատասխան սյունակների ժամանակաշրջանները պետք է ընտրվեն ըստ նվազման։

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) × 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընհանուր ակտիվների միջին մեծություն) × 100

Չուտ շահույթի մարժա (NPM) = Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Չուտ տոկոսային մարժա (NIM) = Չուտ տոկոսային եկամուտ / Եկամտաքեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաքեր ակտիվների եկամտաքերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաքեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Չուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաքեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

այլ կազմակերպությունների համար

Աղյուսակ 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշի անվանումը	Ժամանակա-շրջան	Ժամանակա-շրջան	Ժամանակա-շրջան
Արտադրանքի, ապրանքների, աշխատանք-ների, ծառայությունների իրացումից հասույթ			
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք			
Համախառն շահույթ (վճաս)			
Իրացման ծախսեր			
Վարչական ծախսեր			
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վճաս)			
Գործառնական այլ եկամուտներ			
Գործառնական այլ ծախսեր			
Գործառնական շահույթ (վճաս)			
Ֆինանսական ծախսեր			
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վճաս)			
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վճաս)			
Այլ ոչ գործառնական շահույթ (վճաս)			
Սովորական գործունեությունից շահույթ (վճաս)			
Արտասովոր դեպքերից շահույթ (վճաս)			
Չուտ շահույթ (վճաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը			
Շահութահարկի գծով ծախս (փոխառություն)			
Չուտ շահույթ (վճաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո			

ԱՍՓՈՓՀԱԾՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԵԿՇԻՈ

Ցուցանիշի անվանումը	Ժամանակա- շրջան	Ժամանակա- շրջան	Ժամանակա- շրջան
Հիմնական միջոցներ			
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ			
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			
Հնդամենք ոչ ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ			
Տրված ընթացիկ կանխավճարներ			
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով			
Այլ դեբիտորական պարտքեր			
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ			
Այլ ընթացիկ ակտիվներ			
Հնդամենք ընթացիկ ակտիվներ			
Հնդամենք ակտիվներ			
Կանոնադրական (բաժնեհավաք)			
Կապիտալի զուտ գումար			
Էմիսիոն եկամուտ			
Կուտակված շահույթ			
Պահուստային կապիտալ			
Սեփական կապիտալի այլ տարրեր			
Հնդամենք սեփական կապիտալ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ			
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հնդամենք ոչ ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ			
Կրեդիտորական պարտքեր զնումների գծով			
Ստացված ընթացիկ կանխավճարներ			
Այլ կրեդիտորական պարտքեր			
Այլ ընթացիկ պարտավորություններ			
Հնդամենք ընթացիկ պարտավորություններ			
Հնդամենք պարտավորություններ			

ՀԱՂԱՄՆԱՌ ՍԵՎԻ ԿԱՍՎԻ ԿԱՍՎԻ ԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Ժամանակա-շրջան	Ժամանակա-շրջան	Ժամանակա-շրջան
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին			
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր			
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր			
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր			
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին			

ԱՍՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Ժամանակա-շրջան	Ժամանակա-շրջան	Ժամանակա-շրջան
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)			
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)			
Ակտիվների շահութաբերություն (ROA)			
Զուտ շահույթի մարժա (NPM)			
Կապիտալի համարեքության գործակից			
Ֆինանսական կախվածության գործակից			
Բացարձակ իրացվելության գործակից			
Ընթացիկ իրացվելության գործակից			
Ընդհանուր իրացվելության գործակից			
Դեբիտորական պարտքերի շրջանառելության գործակից			
Դեբիտորական պարտքերի տևողությունն օրերով			
Պաշարների շրջանառելության գործակից			
Պաշարների շրջապատճենի տևողությունն օրերով			
Կրեդիտորական պարտքերի շրջանառելության գործակից			
Կրեդիտորական պարտքերի շրջապատճենի տևողությունն օրերով			

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետունի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետունների միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Իրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Իրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջանառույթի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապատույթի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապատույթի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը)

Հավելված 5

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

Կենտրոնական բանկի նախագահ
-----ին

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

----- կողմից ազդագրի հրապարակման
(բողարկողի անվանումը)
պահանջից բացառությամբ հրապարակային առաջարկի իրականացման մասին

Հարգելի -----

Տեղեկացնում ենք, որ -----

(բողարկողի անվանումը)

իրականացրել է արժեթղթերի հրապարակային առաջարկ: Առաջարկի ժամանակ կիրառվել է ազդագրի հրապարակման պահանջից հետևյալ բացառությունը.

- առաջարկն արվում է այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող արժեթղթերի ընդհանուր արժեքը, վաճառքի գնով առաջարկի պայմանների համաձայն, գերազանցում է 20 միլիոն դրամը՝ յուրաքանչյուր առանձին առաջարկի դեսպում
- առաջարկվող արժեթղթերի միավոր անվանական արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը
- առաջարկվող արժեթղթերի ընդհանուր արժեքը բողարկման կամ վաճառքի գնով 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 40 միլիոն դրամը

Արժեթղթի դասը (տեսակը)	
Թողարկված արժեթղթի քանակը	
Սիավոր անվանական արժեքը	
Ընդհանուր անվանական արժեքը	
Տեղաբաշխման սկիզբը (օր/ամիս/տարի)	
Տեղաբաշխման ավարտը(օր/ամիս/տարի)	
Թողարկողի իրավասու մարմի կողմից բողարկման մասին որոշման ընդունման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Փաստացի տեղաբաշխված արժեթղթերի քանակը	
Տեղաբաշխման միջին գինը	
Փաստացի տեղաբաշխված ընդհանուր գումարը	

(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները)

Կ.Տ.

----- 200 թ.

Հավելված 6

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազգագրի և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԸԱՀԱԳՐԳԻՌ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍՏԱԵԼԻ ՓԱՍՏԱԹՎԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐՎԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՍԱՆ (ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՏՐԻՆ ԹՈՒՅԼԵՎՈՒԹՅԱՆ) ՀԱՍԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՅԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՄԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
----- ին

Հարգելի -----

Տեղեկացնում ենք, որ -----

(Քողարկողի անվանումը)

որոշում է կայացրել շահագողիո ներդրողներին հասանելի փաստաթորի հիման վրա՝
առանց ազդագրի (առևտրի ազդագրի) հրապարակման՝

- իրականացնել այն արժեթղթերի հրապարակային առաջարկ, որոնք փոխանակման միջոցով առաջարկվում են բողարկողի կողմից այլ ընկերության բաժնային արժեթղթերի ձեռքբերման կապակցությամբ (Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված բացառություն)
- իրականացնել այն արժեթղթերի հրապարակային առաջարկ, որոնք բողարկողի կողմից առաջարկվում են միացող ընկերության բաժնետերերին՝ բողարկողին այլ ընկերության միացման կապակցությամբ (Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված բացառություն)
- կարգավորվող շուկայում առևտրին թույլ տալ այն արժեթղթերը, որոնք փողարկողի կողմից առաջարկվում են միացող ընկերության բաժնետերերին՝ բողարկողին այլ ընկերության միացման կապակցությամբ (Օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված բացառություն)
- կարգավորվող շուկայում առևտրին թույլ տալ այն արժեթղթերը, որոնք բողարկողի կողմից առաջարկվում են միացող ընկերության բաժնետերերին՝ բողարկողին այլ ընկերության միացման կապակցությամբ (Օրենքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված բացառություն)

Խնդրում ենք տալ Ձեր նախնական համաձայնությունը վերը նշված հրապարակային առաջարկի (կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության) համար:

Կից ներկայացնում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար անհրաժեշտ փաստաթորները:

Առդիր՝ --- էջ:

(Կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները)

----- 20 թ.

Կ.Տ.

Հավելված 7

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԲԱԺՄԵՏՈՍՍԵՐԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒԽԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- Այս մասում աչքի ընկնող ձևով բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք անհրաժեշտ են առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի շուկայական ռիսկը գնահատելու համար: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի «ՈՒԽԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ» վերնագրի ներքո:

2. ՀԻՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Շրջանառու միջոցների մասին հայտարարություն

Այստեղ ներկայացվում է բողարկողի հայտարարությունն այն մասին, որ ընկերության կարծիքով ընկերության շրջանառու միջոցները բավարար են ընկերության ներկա կարիքների համար: Եթե ընկերության կարծիքով բավարար չեն, ապա պետք է ներկայացվի, թե ինչպես է նախատեսվում լրացուցիչ շրջանառու միջոցներ ներգրավել: Այս մասը չի լրացվում Կենտրոնական բանկի վերահսկողության դաշտում գտնվող ֆինանսական կազմակերպությունների կողմից:

2) Կապիտալիզացիա և պարտավորություններ

Այստեղ ներկայացվում է կապիտալիզացիայի և պարտավորությունների կառուցվածքը ազդագրի կազմնան օրվանից ոչ վաղ, քան 90 օր առաջվա դրությամբ: Կապիտալիզացիայի և պարտավորությունների մասում առանձին տողերով պետք է ներկայացվեն առնվազն՝

- կանոնադրական կապիտալը,
- կուտակված շահույթը (վճարը),
- սեփական կապիտալը,
- երկարաժամկետ պարտավորությունները, որոնք ենթադրում են տոկոսային ծախս,
- կարճաժամկետ պարտավորությունները, որոնք ենթադրում են տոկոսային ծախս,
- արտահաշվեկշռային և պայմանական պարտավորությունները:

Պարտավորությունները պետք է իրենց հերթին տրոհվեն երաշխավորված և չերաշխավորված, ապահովված և չապահովված պարտավորությունների:

3) Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Այստեղ ներկայացվում է առաջարկի նպատակը և, հնարավորության դեպքում, հնարավոր ներգրավվող գուտ գումարների մեծությունը՝ բաժանված ըստ օգտագործման նախատեսվող ուղղությունների: Այստեղ գուտ գումարները

հավաքագրված համախառն գումարների և հավաքագրման նպատակով կատարված ծախսերի տարբերությունն է: Այդ ուղղությունները պետք է դասակարգել ըստ առաջնահերթության: Պետք է ներկայացնել միջոցների օգտագործման մանրամասն նկարագիրը, մասնավորապես, նկարագրել արդյո՞ք նրանք օգտագործվելու են բնականոն գործունեության շրջանակներից դրս ակտիվների ձեռքբերման համար, այլ բիզնեսների հայտարարված ձեռքբերումների նպատակով կամ պարտավորությունների գծով հասուցումների, պարտավորությունների մարման կամ վերաֆինանսավորման նպատակով և այլն: Այստեղ գուտ գումար ասելով հասկանում ենք հավաքագրված համախառն գումարի և այդ գումարները հավաքագրելու համար կատարված ծախսերի տարբերությունը:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿԱՊՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ (ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ) ԱՐԺԵԹՎԹԵՐԻ ՀԵՏ

1) Այստեղ ներկայացվում են

- ա. Արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր (առկայության դեպքում),
- բ. Երկիրը, որի օրենսդրության համաձայն են թողարկվել տվյալ արժեթղթերը,
- գ. Արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում պետք է նշել այն իրավաբանական անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեթղթերի ռեեստրը,
- դ. մեկ արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում),
- ե. թողարկման արժույթը,
- գ. Արժեթղթերից բխող ներքոհիշյալ իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը, մասնավորապես:
 1. Չափութաբաժնի ստացման իրավունքները (չափութաբաժնի ստացման կոնկրետ օրերը, չափութաբաժնի ստանալու սահմանափակումները և ոչ ռեզիլիենտների կողմից ստացման գործընթացը, չափութաբաժնի հաշվարկման մեթոդները, վճարման պարբերականությունները և մեթոդները),
 2. Զայնի իրավունքները,
 3. Նույն դասի բաժնետոսների տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքները,
 4. Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները,
 5. Հետզննան պահանջի իրավունքները,
 6. Փոխարկման իրավունքները:
- ի. Եթե առաջարկվող արժեթղթերը նոր թողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համարու բովանդակությունը այդ նոր թողարկման մասին,
- լ. Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը,
- մ. Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորության նկարագրությունը, ինչպես նաև այն դեպքերի նկարագրությունը, եթե նման պարտավորությունը բացակայում է,
- օ. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը:

4. ԱՌԱՋԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 1) Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

Այսուղ ներկայացվում են.

- ա. Թողարկման և(կամ) առաջարկի ընդհանուր ծավալը: Պետք է տարանջատել, թե որ մասն է նոր բողարկված արժեթղթեր և, հետևաբար, ենթակա է բաժանորդագրության, և որ մասը՝ ոչ: Եթե առաջարկի ծավալը հնարավոր չէ ներառել ազդագրում, ապա ազդագիրը պետք է առնվազն պարունակի առաջարկի ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները, ինչպես նաև նշել այն մասին, որ առաջարկի վերջնական ծավալը հրապարակվելու է մինչև տեղաբաշխման գործընթացը սկսելը,
- բ. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխություններ),
- գ. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրություն, այսինք, նկարագրել թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի այն անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և ներդրում կատարել արժեթղթերում,
- դ. Այն հանգամանքները, որոնց դեպքում առաջարկը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել: Պետք է ներկայացնել նաև, արդյոք առաջարկը կարող է չեղյալ ճանաչվել, եթե արդեն կատարվել են գործարեր, ինչպես նաև առաջարկը չեղյալ համարելու դեպքում ներդրողներին գումարները վերադարձնելու կարգը,
- ե. Բաժանորդագրության նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը,
- զ. Այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում: Այդ սահմանաշափերը կարող են նշել կամ որպես արժեթղթերի նվազագույն և առավելագույն բույլատրելի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն բույլատրելի համախառն գումարներ,
- է. Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախատեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ բաժանորդագրության վճարները,
- ը. Արժեթղթերի դիմաց վճարները կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը,
- թ. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը,
- ժ. Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը:

2) **Տեղաբաշխման պլանը**

Այսուղ ներկայացվում են.

- ա. Ներդրողների որ խմբերին է ուղղված առաջարկը (համրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն): Եթե առաջարկը միանգամից արվում է 2 և ավելի երկրներում և որոշակի տրանշ նախատեսված է կոնկրետ այդ երկրների համար, ապա պետք է նկարագրել դա,
- բ. Արդյո՞ք, ըստ բողարկողի ունեցած տվյալների, որևէ խոշոր բաժնետերեր կամ բողարկողի կառավարման մարմնի անդամ նախատեսում է բաժանորդագրվել առաջարկին կամ արդյո՞ք որևէ անձ, ըստ բողարկողի ունեցած տվյալների, նախատեսում է բաժանորդագրվել առաջարկվող արժեթղթերի 5 և ավելի տոկոսին,

- գ. ինչպես են ներդրողները տեղեկացվում իրենց հայտերի բավարարման մասին,
- դ. արդյո՞ք որոշակի տրանշ նախատեսված է մանր ներդրողների, ինստիտուցիոնալ ներդրողների կամ թողարկողի աշխատակիցների համար,
- ե. այն մերժմերի նկարագրությունը, որի համաձայն բավարարվում կամ մերժվում են բաժանորդագրության հայտերը, այդ թվում այն հնարավոր դեպքերի նկարագրությունը, որոնց առկայության դեպքում բաժանորդագրությունների քանակը կարող է նվազեցվել թողարկողի կողմից և գումարների վերադարձման կարգը:

3) Առաջարկի գինը

Այստեղ ներկայացվում են.

- ա. այն գինը, որով արժեթղթերը առաջարկվելու են: Եթե գինը հայտնի չէ կամ այդ արժեթղթերի համար չկա իրացվելի շուկա, պետք է նշել առաջարկի առավելագույն գինը և վերջնական գնի որոշման մերողը կամ պայմանները, ինչպես նաև նշել այն մասին, որ առաջարկի վերջնական գինը հրապարակվելու է մինչև տեղաբաշխման գործընթացը սկսելը: Այստեղ պետք է ներկայացնել նաև այն ծախսերը և հարկերը, որոնք գանձվելու են բաժանորդագրվողից կամ գնորդից,
- բ. Առաջարկի գնի բացահայտման գործընթացի նկարագրությունը:

4) Տեղաբաշխումը

Այստեղ ներկայացվում են.

- ա. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել երաշխավորված տեղաբաշխում (անդերուայթինգ),
- բ. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում,
- շ. երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները և տեղաբաշխման համար գանձվող միջնորդավճարները: Եթե երաշխավորված տեղաբաշխման պայմանագրը թողարկման ոչ լրիվ ծավալն է ընդգրկում, ապա պետք է նշել թողարկման այն մասը, որը չի ծածկում այդ պայմանագրը: Այստեղ պետք է նշել նաև յուրաքանչյուր տեղաբաշխողի մասը տեղաբաշխման ընդհանուր ծավալում,
- դ. Եթե է կնքվել կամ երբ է նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերուայթինգի) պայմանագրը,
- ե. այն բաների անվանումները, գտնվելու վայրերը և բանկային հաշվի համարները, որտեղ կարելի է վճարում կատարել արժեթղթերի դիմաց, ինչպես նաև այն պահառումների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեթղթերի հաշվի բացել:

5. ԱՌԵՎԱՐԻՆ ԹՈՒՅԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Այստեղ ներկայացվում են.

- 1) արդյո՞ք առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում (նշել նաև շուկայի անվանումները) առևտրին թույլտվություն: Այստեղ պետք է նշել, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Եթե հնարավոր է, պետք է նաև նշել առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը,
- 2) այն շուկաների անվանումները (այնքանով, որքանով դրանք հայտնի են թողարկողին), որտեղ առաջարկվող արժեթղթերի նույն դասը կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի նույն դասն արդեն իսկ թույլատրված են

առևտրին,

- 3) այն անձանց անվանումները, որոնք ունեն պարտավորություն առաջարկվող կամ առևտրին բոլորվորյան առարկա արժեքորդերի մասով ապահովել իրացվելիություն երկրորդային շուկայում (հանդիսանալ շուկա ստեղծող՝ ներկայացնելով այդ պարտավորության հիմնական պայմանները,
- 4) Եթե քողարկողը նախատեսում է գնի կայունացմանն ուղղված միջոցառումներ, ապա նշել դրա մասին տեղեկություններ (մասնավորապես նշել, որ նախատեսվում են գնի կայունացման միջոցառումներ, որ որևէ երաշխիք չկա այս միջոցառումների տված արդյունքի մասով, որ սրա նախատակն է ձևավորել կայուն շուկայական գին, կայունացման միջոցառումների սկզբը և ավարտը, կայունացնողի ինքնությունը): Գնի կայունացումը նշանակում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից արժեքորդերով գործարքների կատարում առաջարկից հետո կամ առևտրի սկզբնական շրջանում կայուն շուկայական գին ձևավորելու նպատակով:

6. ՎԱՃԱՌՈՂ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

Այստեղ ներկայացվում են.

- 1) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անվանումները (անունը, ազգանունը) և գտնվելու վայրը (բնակության վայրը), որոնք արժեքորդերի վաճառքի առաջարկ են անում ներկայացվող ազդագրի հիման վրա՝ հաշվի առնելով այն, որ ազդագրի հիման վրա առաջարկ կարող են անել նաև այդ պահին բաժնետեր հանդիսացող անձինք: Այս անձանց մասով պետք է նշել նաև, թե ազդագրի ներկայացմանը նախորդող 3 տարիների ընթացքում ինչ բնույթի փոխարարերությունների (բաժնետեր, տնօրեն, խորհրդի անդամ, հաշվապահ, խորհրդատու, առողջապահ և այլն) մեջ են եղել քողարկողի կամ դրա իրավանախորդի հետ,
- 2) Յուրաքանչյուր վաճառող բաժնետիրոջ կողմից առաջարկվող արժեքորդի քանակը և դասը,
- 3) Վաճառքը սահմանափակող պայմանագրերի առկայությունը, կողմերը, համառոտ բովանդակությունը և բացառությունները, ինչպես նաև սահմանափակման ժամկետները:

7. ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ԾԱԽՄԵՐԸ

Այստեղ ներկայացվում են քողարկման և առաջարկի արդյունքում քողարկողի կողմից ակնկալվող համախառն զուտ եկամուտը և կատարված ծախսերը:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1) Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության հետ կապված ներգրավված է եղել որևէ խորհրդատու, ապա նշել այդ խորհրդատուի իրավասությունների շրջանակը,
- 2) Ներկայացնել տեղեկատվություն, թե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության որ մասն է քողարկողի անկախ առողջապահ առողջապահ և արդյո՞ք այդ մասով առկա է առողջապահական եզրակացություն: Եթե առկա է եզրակացությունը, ապա ներկայացնել այդ եզրակացություն համառոտ բովանդակությունը կամ շարադրել այն ամբողջությամբ,

- 3) Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիցում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի թողնվել, որը կարող էր խեղաքյուրել այդ տեղեկատվության իմաստը։ Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը։

Հավելված 8

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱԽ ԱՌԴՎՈՐՆԵՐԸ

- 1) Նշել պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար թողարկողի առողջանականացնելու անկախ առողջապահության անվանումները և գտնվելու վայրերը: Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե որ մասնագիտական միություններին են անդամակցում այդ առողջապահությունները,
- 2) Եթե պատմական ֆինանսական ժամանակաշրջանում թողարկողի առողջապահությունը փոփոխվել են, հեռացվել են կամ նորից չեն ընտրվել որպես առողջապահություն, ապա նշել դրա հիմնական պատճառները:

2. ՈՒԽԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐ

- 1) Այս մասում աչքի ընկնող ձևով բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք հատուկ են թողարկողին և նրա գործունեության ոլորտին կամ ոլորտներին: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի «ՈՒԽԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐ» վերնագրի ներքո:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՍԱՍԻՆ

1) Թողարկողի պատմությունը և զարգացումը

Այստեղ ներկայացվում են.

- ա. թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը: Եթե թողարկողի կանոնադրությամբ տրված են թողարկողի անվանման տարբերակներ օտար լեզուներով, նշվում են նաև դրանք: Եթե թողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ թողարկողը վերակազմակերպվել է, ապա ներկայացնել այդ մասին տեղեկատվություն:
- բ. թողարկողի պետական գրանցման վայրը և համարը,
- գ. ստեղծման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը (եթե հնարավոր է որոշել),
- դ. թողարկողի գտնվելու վայրը, օրենսդրությունը, որի ներքո թողարկողը գործունեություն է ծավալում, թողարկողի հիմնադրման երկիրը, կանոնադրությամբ նշված գտնվելու վայրը, փաստացի գործունեություն ծավալելու վայրը, եթե տարբերվում է կանոնադրությամբ նշված գտնվելու վայրից, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ), ինտերնետային կայքը,
- ե. թողարկողի բիզնեսի զարգացման մեջ տեղի ունեցած կարևոր դեպքերը՝ ըստ թողարկողի:

2) ՆԵՐՋՐՈՒՄՆԵՐԸ

Այսուեղ ներկայացվում են.

- ա. պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը կատարված էական ներդրումների նկարագիրը, ներառյալ՝ ներդրումների ծավալը,
- բ. այն էական ներդրումների նկարագիրը, որոնք ընթացքի մեջ են, ներառյալ՝ այդ ներդրումների տարածքային տեղաբաշխումը (ներքին, օտարերկրյա) և ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին),
- գ. տեղեկատվություն թողարկողի ապագա էական այն ներդրումների մասին, որոնց կատարման ուղղությամբ թողարկողի կառավարման համապատասխան մարմինները ստանձնել են պարտավորություն, ինչպես նաև դրանց ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին):

4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Հիմնական գործունեությունը

Այսուեղ ներկայացվում են.

- ա. թողարկողի գործառույթների և հիմնական գործունեության նկարագիրը և դրանց վրա ազդող հիմնական գործուները՝ նշելով պատմական ֆինանսական ժամանակաշրջանում կանաչական ապրանքների կամ նատուրալ ծառայությունների հիմնական տեսակները (ապրանքների և ծառայությունների մեջ տեսականու առակայության պարագայում ապրանքներն ու ծառայությունները կարելի է ներկայացնել խմբավորված),
- բ. արդյո՞ք նախատեսվում է նոր ապրանքների արտադրություն կամ նոր ծառայությունների մատուցում: Այնքանով, որքանով գաղտնիք չէ, ներկայացնել այդ նոր ապրանքների կամ ծառայությունների գաղգացման փուլը:

2) Հիմնական շուկաները

Այսուեղ ներկայացվում են.

- ա. թողարկողի արտադրանքների սպառման և ծառայությունների նատուրալ հիմնական շուկաների նկարագիրը՝ ներկայացնելով ապրանքների և ծառայությունների յուրաքանչյուր խմբից ստացվող եկամուտները: Ներկայացնել նաև շուկաների տարածքային բաժանումը (ներքին, արտաքին, ըստ երկրների և այլն),
- բ. Եթե որևէ բացարիկ գործոն ազդել է թողարկողի հիմնական գործունեության կամ հիմնական շուկաների վրա, ապա ներկայացնել այդ փաստը,
- գ. թողարկողի մրցակցային դիրքի նկարագրությունը:

5. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 1) Եթե թողարկողը խմբի անդամ է, ապա համառոտ ներկայացնել խմբի կառուցվածքը և թողարկողի տեղը այդ խմբում,
- 2) Ներկայացնել թողարկողի դուստր ընկերությունների ցանկը, ներառյալ անվանումը, հիմնադրման երկիրը, յուրաքանչյուր դուստր ընկերությունում թողարկողի մասնակցության չափը:

6. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- 1) Ներկայացնել տեղեկատվություն թողարկողի տրամադրության տակ գտնվող և մոտակայում պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների (շենքեր, շինություններ, հողամաս, սարք, սարքավորում և այլն) վերաբերյալ,

ներառյալ վարձակալած գույքը: Եթե որևէ հիմնական միջոց ընկերությանը սեփականության իրավունքով չի պատկանում, կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է (մասնավորապես՝ եթե գրավ է դրված), ապա համառոտ ներկայացվում են այդ հիմնական միջոցի օգտագործման պայմանները և (կամ) օգտագործման սահմանափակումների բնույթը: Նշել նաև պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին): Հիմնական միջոցը համարվում է էական մեծություն կազմող, եթե դրա արժեքը գերազանցում է թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը:

- 2) Նկարագրել արդյո՞ք հնարավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել թողարկողի կողմից հիմնական միջոցների օգտագործումը:

7. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՊԻՏԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ (ՊԱՍԻՎՆԵՐԸ)

Այստեղ ներկայացվում է.

- 1) տեղեկատվություն ընկերության սեփական կապիտալի մասին և ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների մասին,
- 2) թողարկողի դրամական հոսքերի առաջացման աղբյուրները և գումարները, ինչպես նաև ազատ ոճով նկարագրվում են այդ դրամական հոսքերը,
- 3) արդյո՞ք թողարկողն ունի փոխառություն ներգրավելու պահանջ,
- 4) կապիտալ ռեսուրսների օգտագործման այն սահմանափակումները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի էապես ազդել թողարկողի գործունեության վրա:

8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում է պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար թողարկողի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականությունը, ներառյալ՝ թողարկողի կողմից ֆինանսավորվող հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված ծախսերի մեծությունը: Այստեղ կարող են նաև ներկայացվել այնպիսի հետազոտական և զարգացման աշխատանքներ, որոնք կապված չեն թողարկողի գործունեության հետ:

9. ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում են թողարկողի գործունեության իրականացման հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) և արտոնագրերի վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով գործունեության համապատասխան տեսակները, տրման ամսաթվերը, գործողության ժամկետները:

10. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում են թողարկողի արտադրած ապրանքների և մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները, դրանց ինքնարթերի և վաճառքի գների միտումները վերջին հաշվետու ֆինանսական տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք ըստ թողարկողի էական են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

11. ԾԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Եթե քողարկողը որոշում է ազդագրում ներառել շահույթի կանխատեսումներ կամ գնահատումներ, ապա ներկայացնում է հետևյալ տեղեկատվությունը.

- 1) այն հիմնական սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիմնան վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի քողարկողի պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հետ,
- 2) տարանջատված նկարագրվում են այն գործոնները, որոնց վրա քողարկողի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն և այն գործոնները, որոնց վրա ազդելու նման հնարավորությունը բացակայում է, ընդ որում, նկարագրությունը պետք է շարադրվի ներդրողի համար մատչելի լեզվով:

12. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում է.

- 1) քողարկողի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները,
- 2) կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, գրադարանը պահպանը, իրավասություններն ու պարտականությունները, նրանցից յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը քողարկողի կազմից դուրս՝ ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին: Այս տեղեկատվությունը ներկայացվում է ըստ յուրաքանչյուր կառավարման մարմնի: Եթե ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պատվիրակվել կամ փոխանցվել են առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի), ապա ներկայացնել այդ անձի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը),
- 3) կառավարման մարմնի անդամների միջև ազգակցական կապը (արդյո՞ք նրանք միենույն ընտանիքի անդամներ են, ազգակացական կապի բնույթը),
- 4) կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամի մասին հետևյալ՝
 - ա. մասնագիտությունը (որակավորումը),
 - բ. ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում ն՞ր ընկերություններում կամ կազմակերպություններում և ինչպիսի՞ դեկավար պաշտոններ է գրանցրել քողարկողի տվյալ կառավարման մարմնի անդամը: Այստեղ պետք չէ ներկայացնել քողարկողի դուստր ընկերություններում այդ անդամների գրադարանը դեկավար պաշտոնները,
 - գ. ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում խարդախության համար դատվածության մասին,
 - դ. արդյո՞ք քողարկողի կառավարման մարմնի անդամները ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում որևէ առնչություն ունեցել են որևէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ: Եթե այս, ապա տալ դրա նկարագիրը,

- ե. արդյո՞ք թողարկողի կառավարման մարմնի անդամները ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում պատասխանատվության ենթարկվել են պետական որևէ մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից և արդյո՞ք նրանք դատարանի կողմից զրկվել են որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն գրադարձնելու իրավունքից: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը:
- 5) Արդյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև: Եթե այո, ապա պարզ ձևով նկարագրել այդ: Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին:
- 6) Կա՞ արդյոք որևէ պայմանագործածություն խոչոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որևէ անձ ընտրվել կամ նշանակվել է թողարկողի կառավարման մարմնի անդամ: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը:

13. ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում է վերջին հաշվետու ֆինանսական տարվա համար.

- 1) թողարկողի կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի կողմից թողարկողից և նրա դուստր ընկերություններից որպես վարձատրություն և պարզեցնելու ստացված գումարները՝ ներառյալ նրանց օգտին կատարված ցանկացած ձևով փոխհատուցումները (կուտակային կենսաքոշակային հատկացումները, ապահովագրական վճարները, բաժնետոմսերի ձեռքբերման օպցիոնները և այլն),
- 2) թողարկողի կողմից թողարկողի կառավարման մարմինների անդամների օգտին կատարված կենսաքոշակային վճարումները՝ ընդհանուր գումարով:

14. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ ներկայացվում է.

- 1) կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի՝ տվյալ պաշտոնում պաշտոնավարման սկզբը և ավարտը,
- 2) տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք կառավարման անդամները չունեն պայմանագրեր թողարկողի կամ նրա դուստր ընկերությունների հետ այն մասին, որ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է ստանան պարզեցնելու կամ լրավճար: Եթե նման պայմանագրեր առկա չեն, ապա առանձին դրույթով նշել դրանց բացակայության մասին,
- 3) առկայության դեպքում ներկայացնել թողարկողի առողիտի կոմիտեի կամ աշխատավարձերի (վարձատրության) կոմիտեների մասին տեղեկատվություն, ներառյալ կոմիտեների անդամների անունը, ազգանունը և կոմիտեների իրավասությունները և պարտականությունները: Նման կոմիտեները կազմված են լինում թողարկողի կառավարման մարմինների անդամներից և ստեղծվում են կոնկրետ խնդիրների լուծման նպատակով,
- 4) նշել արդյո՞ք թողարկողը բավարարում է իր ստեղծման երկրում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (նման սկզբունքների առկայության դեպքում):

15. ԱՇԽԱՏԱՎԿԻՑՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում է.

- 1) պատմական ֆինանսական ժամանակաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով աշխատակիցների միջին տարեկան թվաքանակը կամ այդ թվաքանակը տարվա վերջի դրույթյամբ: Հնարավորության դեպքում ներկայացնել նաև աշխատակիցների թվաքանակի բաշխումը՝ խմբավորելով ըստ իրականացվող գործառույթների տեսակների և ըստ տարածքային բաշխվածության: Եթե բողարկողն ունի բավականին մեծ թվով ժամկետային աշխատակիցներ, ապա նշել նրանց միջին տարեկան թիվը վերջին հաշվետու տարվա համար և տոկոսը ընդհանուր աշխատակիցների թվում,
- 2) հնարավորինս բարմ տեղեկատվություն բողարկողի կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամին պատկանող՝ բողարկողի բաժնային արժեքութերի և այդ արժեքութերի նկատմամբ օացիոնների առկայության մասին՝ նշելով նրանցից յուրաքանչյուրին պատկանող արժեքութերի դասը, քանակը, տոկոսը ընդհանուրի մեջ և այլն,
- 3) նկարագրություն այն մասին, թե ինչ ծրագրեր են գործում՝ կապված աշխատակիցներին բողարկողի կապիտալում մասնակցության հնարավորություն ընձեռելու հետ:

16. ԽՈՇՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ ԵՎ ՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ

Այստեղ ներկայացվում է.

- 1) այնքանով, որքանով հայտնի է բողարկողին, խոշոր բաժնետերերի (բացառությամբ բողարկողի կառավարման մարմնների անդամների) անունը ազգանունը, նրանցից յուրաքանչյուրի մասնակցության չափը: Եթե չկան խոշոր բաժնետերեր, ապա առանձին նշել այդ փաստը,
- 2) տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բոլոր խոշոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանչյուրը տախս է ձայնի միևնույն իրավունքը,
- 3) այնքանով, որքանով հայտնի է բողարկողին, տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այո, ապա նշել հսկողների անվանումը (անունը ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում բողարկողին):

17. ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՄՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՁՆԵՐԸ

- 1) Այստեղ բացահայտվում են բողարկողի և բողարկողին փոխկապակցված անձանց միջև այն գործարքների բնույթը (փոխկապակցված անձի անվանումը, գործարքի նկարագիրը, առարկան, ժամկետները) և արժեքը, որոնք իրականացվել են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 1 տարվա ընթացքում և որոնց արժեքը գերազանցում է բողարկողի սեփական կապիտալի արժեքի 1 տոկոսը (կամ) ոչ բնականն գործունեության շրջանակում կնքված գործարքի դեպքում՝ դրա արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը՝ բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետում նշված դեպքի: Ընդ որում, այստեղ գործարք ասելով հասկանում ենք գոյրի, ռեսուրսների կամ պարտավորությունների փոխանցում կողմերի միջև՝ անկախ վճարի գանձումից: Ներկայացման ենթակա չեն փոխկապակցված

անձանց հետ կնքվող ներկայացները: Եթե փոխկապակցված անձանց հետ որևէ գործարք կնքվել է ոչ արդար գնով, ապա ներկայացնել դրա հանգամանքները և բացատրությունը: Եթե բոլոր գործարքները կնքվել են արդար գնով, ապա նշել այդ մասին: Սույն կետով սահմանված բացահայտման պահանջը չի գործում այն դեպքում, եթե օրենքի համաձայն նման տեղեկատվությունը բացահայտման ենթակա չէ:

- 2) Եթե ազդագիրը գրանցման ներկայացնելու պահի դրությամբ կան փոխկապակցված անձանց տրված չմարված փոխառություններ և (կամ) երաշխավորություններ (երաշխիքներ), ապա նշել փոխառության չմարված մասի մեծությունը և (կամ) երաշխավորության (երաշխիքի) բնույթը և (կամ) մեծությունը:
- 3) Եթե բողարկողը հաշվետվությունները կազմում է «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին» համապատասխան, ապա փոխկապակցված անձանց հետ գործարքները բացահայտվում են այդ ստանդարտներով սահմանված կարգով և բովանդակությամբ:

18. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻճԱԿԻ, ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՄԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում են պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ առողջտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ առողջտորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ (ցանկության դեպքում կարելի է ներկայացնել այդ եզրակացության պատճենը):

2) Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Եթե ազդագիրը գրանցման է ներկայացվում վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ առողջտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններ) վերջին օրվանից սկսած 9 ամիս հետո, ապա ազդագրում ներկայացվում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (եռամյակային կամ կիսամյակային՝ կախված բողարկողի ցանկությունից), որոնք ծածկում են տարվա սկզբից առնվազն 6 ամիս ժամանակաշրջան: Այս միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել առանց առողջտորական եզրակացության:

3) Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Եթե ազդագրում ներառված վերջին (ամենաքարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն, ապա տալ դրա նկարագիրը:

4) Դատական, արքիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Այս մասում ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում թողարկողի ներգրավվածությամբ այն բոլոր դատական, արքիտրաժային և (կամ) վարչական վարույթների նկարագիրը (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին թողարկողը տեղյակ է), որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն:

5) Հարկային արտոնությունները

Այս մասում ներկայացվում են այն հարկային արտոնությունների նկարագիրը, որոնցից օգտվում է բողարկողը:

19. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Կանոնադրական կապիտալ

Այս մասում ներկայացվում է ներքոհիշյալ տեղեկատվությունը՝ ըստ պատմական ֆինանսական վերջին ժամանակաշրջանի հաշվապահական հաշվեկշռի.

- ա. կանոնադրական կապիտալի մեծությունը,
- բ. հայտարարված բաժնետոմսերի քանակը,
- գ. բողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը, բողարկված բայց ոչ լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը,
- դ. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը,
- ե. բողարկողին կամ նրա դուստր ընկերությանը պատկանող՝ բողարկողի բողարկած բաժնետոմսերի քանակը, անվանական և հաշվեկշռային արժեքները:

2) Կանոնադրությունը

Այս մասում ներկայացվում է.

- ա. բողարկողի նպատակը և գործունեության ոլորտը՝ նշելով թե բողարկողի կանոնադրության որ մասում կարելի է գտնել դրանք,
- բ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնք կարգավորում են բողարկողի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականություններ՝ ներկայացնելով դրանց համառոտ նկարագիրը,
- գ. բողարկողի բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների նկարագիրը՝ ըստ կանոնադրության, ինչպես նաև այդ արժեքորդերի հետ կապված սահմանափակումները,
- դ. ինչ քայլեր է պետք ձեռնարկել, բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ մտցնելու համար,
- ե. հերթական և արտահերք բաժնետերերի ժողովների իրավիրման կարգը, դրանց մասնակցելու կարգը,
- զ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնց հիման վրա պահանջվում է բողարկողի նույնակցություն ձեռքբերելիս բացահայտել դրա մասին տեղեկատվություն,
- է. կանոնադրության այն դրույթների նկարագիրը, որոնցով ավելի խիստ պահանջներ են սահմանվում, քան սահմանված է համապատասխան օրենքներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

20. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Այստեղ ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում բողարկողի կողմից բնականն զործունեության շրջանակներից

դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է բողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

21. ՓՈՐՁԱԳԵՏԻ, ԳՆԱՀԱՏՈՂԻ, ԽՈՐՀՈՂԱՏՈՒԻ ԿԱՄ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՑԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ազդագրի որևէ մասում օգտագործվել է հաշվապահի, զնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք (եզրակացություն, հաշվետվություն, զնահատման ակտ և այլն), ապա ազդագրի այս մասում պետք է բացահայտվի այդ փաստը, այդ անձանց ինքնությունը (անունը ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը)), որակափորումը և արդյոք բողարկողի հետ փոխակապակցված չէ: Այստեղ պետք է նշել նաև, թե ազդագրի ո՞ր մասում է օգտագործվել կամ ներկայացվել այդ կարծիքը:

Եթե ազդագրում ներառված որևէ տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիացում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի բողնվել, որը կարող էր խեղաքյուրել այդ տեղեկատվության իմաստը: Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը:

22. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այստեղ ներկայացվում է հայտարարություն այն մասին, որ ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճեն) մշտապես մատչելի են հանրությանը.

- 1) Թողարկողի կանոնադրությունը,
- 2) Փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ զնահատումները և վերլուծական նյութերը, որոնք պատրաստվել են բողարկողի պատվերով և որոնք կամ որոնց մի մասն օգտագործվել է ազդագրում:

Այստեղ պետք է նշել նաև թե դրանցից յուրաքանչյուրն ինչպես է մատչելի դարձվում հանրության՝ էլեկտրոնային թե թղթային ձևով: Եթե էլեկտրոնային ձևով է մատչելի դարձվում, ապա նշել դրանց էլեկտրոնային հասցեները, իսկ եթե թղթային՝ ապա նշել համապատասխան հասցեները, որտեղից կարող են դրանք ձեռք բերվել:

23. ՍԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԱՆՁԱՑ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ

Այստեղ նշվում է այն անձանց մասին տեղեկատվություն, որտեղ բողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունի ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցություն՝ նշելով այդ անձանց անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, բողարկողին պատկանող բաժնային արժեքորերի քանակը և մասնակցության չափը:

Հավելված 9

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒԽԿԱՅՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- Այս մասում աչքի ընկնող ձևով բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք անհրաժեշտ են առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի շուկայական ռիսկը գնահատելու համար: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի «ՈՒԽԿԱՅՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ» վերնագրի ներքո:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Այստեղ ներկայացվում է առաջարկի նպատակը և, հնարավորության դեպքում, հնարավոր ներգրավվող զուտ գումարների մեծությունը՝ բաժանված ըստ օգտագործման նախատեսվող ուղղությունների: Այդ ուղղությունները պետք է դասակարգել ըստ առաջնահերթության: Այստեղ զուտ գումար ասելով հասկանում ենք հավաքագրված համախառն գումարի և այդ գումարները հավաքագրելու համար կատարված ծախսերի տարբերությունը:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿԱՊՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ (ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎԱՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ) ԱՐԺԵԹՎԹԵՐԻ ՀԵՏ

- Այստեղ ներկայացվում են.

- Արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ արժեթղթի տարբերակիշ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիշ ծածկագիր (առկայության դեպքում),
- Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են տվյալ արժեթղթերը,
- Արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում պետք է նշել այն անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեթղթերի ռեեստրը,
- Արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում),
- Թողարկման արժույթը,
- Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը): Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչ պայմանների դեպքում է հնարավոր այդ արժեթղթերի վերադասակարգումը,
- Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործնթացը,
- Անվանական տոկոսադրույթը և այդ տոկոսների վճարման պայմանները, մասնավորապես, տոկոսների վճարման պարբերականությունը, կոնկրետ օրերը

- (օրերի հաշվարկման կարգը), տոկոսի ստացման հայտերի ներկայացման թույլատրելի ժամանակահատվածը և մայր գումարի վերադարձման կարգը: Եթե տոկոսադրույթը ֆիբսված չէ (փոփոխուն է), ապա՝ ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույթի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի (դրա փոփոխության) մասին տեղեկատվություն: Այս դեպքում պետք է նաև նկարագրել, թե շուկայական ինչպիսի պայմաններ կարող են ազդել այդ ցուցանիշների վրա, ինչպես նաև այն մասին, թե ով է իրականացնելու այդ փոփոխուն տոկոսադրույթի հաշվարկը:
- թ. Արժեքորերի մարման ժամկետը: Մասնակի մարումների դեպքում, դրա նկարագիրը: Վաղաժամկետ մարման հնարավորության դեպքում (քողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ), դրա ժամկետները և պայմանները:
 - ժ. Արժեքորերի տարեկան եկամտաքերությունը: Համառոտ նկարագրել նաև դրա հաշվարկման մեթոդը.
 - ժա. Եթե առաջարկվող արժեքորերը նոր քողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր քողարկման մասին,
 - ժը. արժեքորերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը,
 - ժգ. արժեքորերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը:

4. ԱռԱԶԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԵՐԸ

- 1) Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

Այստեղ ներկայացվում են.

- ա. Թողարկման և(կամ) առաջարկի ընդհանուր ծավալը: Եթե քողարկման կամ առաջարկի ծավալը դեռևս որոշված չէ, նկարագրել, թե ինչ ժամկետներում կիրապարակվեն վերջնական ծավալի մասին տեղեկությունները, ինչպես նաև ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները,
- թ. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխությունները),
- ը. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրությունը, այսինք, նկարագրել թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի այն անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և ներդրում կատարել արժեքորերում,
- դ. բաժանորդագրության ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը,
- ե. այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախատեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ բաժանորդագրության վճարները,
- զ. այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում: Այդ սահմանաշափերը կարող են նշվել կամ որպես արժեքորերի նվազագույն և առավելագույն թույլատրելի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն թույլատրելի համախառն գումարներ,
- է. արժեքորերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեքորերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեքորերի սեփականության

- վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը,
- թ. առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը,
- թ. նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը:

2) **Տեղաբաշխման պլանը**

Այստեղ ներկայացվում են.

- ա. ներդրողների որ խմբերին է ուղղված առաջարկը (հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն),
- թ. ինչպես են ներդրողները տեղեկացվում իրենց հայտերի բավարարման մասին:

3) **Առաջարկի գինը**

Այստեղ ներկայացվում են.

- ա. այն գինը, որով արժեքրերն առաջարկվելու են: Եթե գինը հայտնի չէ, ապա պետք է նշել առաջարկի առավելագույն գինը և վերջնական գնի որոշման մերողը կամ պայմանները, ինչպես նաև առաջարկի գնի բացահայտման գործընթացի նկարագրությունը: Այստեղ պետք է ներկայացնել նաև այն ծախսերը և հարկերը, որոնք գանձվելու են բաժանորդագրվողից կամ գնորդից:

4) **Տեղաբաշխումը**

Այստեղ ներկայացվում են.

- ա. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել երաշխավորված տեղաբաշխում (անդերուայթինգ),
- թ. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում,
- շ. երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները և տեղաբաշխման համար գանձվող միջնորդավճարները: Եթե երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը թողարկման ոչ լրիվ ժաման է ընդգրկում, ապա պետք է նշել թողարկման այն մասը, որը չի ծածկում այդ պայմանագիրը: Այստեղ պետք է նշել նաև յուրաքանչյուր տեղաբաշխողի մասը տեղաբաշխման ընդհանուր ծավալում,
- դ. երբ է կնքվել կամ երբ է նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերուայթինգի) պայմանագիրը,
- ե. այն բանկերի անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է վճարում կատարել արժեքրերի դիմաց, ինչպես նաև այն պահառուների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեքրերի հաշիվ բացել:

5. **ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՄԸ**

1) Այստեղ ներկայացվում են.

- ա. արդյո՞ք առաջարկվող արժեքրերի մասով հետազայում հայցվելու է կարգավորվող շուկայում (նշել նաև շուկայի անվանումները) առևտրին թույլտվություն: Այստեղ պետք է նշել, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Եթե հնարավոր է, պետք է նաև նշել առևտրին թույլտվության սպասվող ամսարիվը,
- թ. այն շուկաների անվանումները (այնքանով, որքանով դրանք հայտնի են թողարկողին), որտեղ առաջարկվող արժեքրերի նույն դասը կամ առևտրին թույլտվության առարկա արժեքրերի նույն դասն արդեն իսկ թույլատրված են առևտրին,
- շ. այն անձանց անվանումները, որոնք ունեն պարտավորություն առաջարկվող

կամ առևտրին թույլտվության առարկա արժեքների մասով ապահովել իրացվելիություն երկրորդային շուկայում (հանդիսանալ շուկա ստեղծող)՝ ներկայացնելով այդ պարտավորության հիմնական պայմանները:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1) Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության հետ կապված ներգրավված է եղել որևէ խորհրդատու, ապա նշել այդ խորհրդատուի իրավասությունների շրջանակը.
- 2) Ներկայացնել տեղեկատվություն, թե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության որ մասն է բողարկողի անկախ առողջության առողջության մասով առկա է առողջության եզրակացություն: Եթե առկա է եզրակացությունը, ապա ներկայացնել այդ եզրակացության համառոտ բովանդակությունը կամ շարադրել այն ամբողջությամբ.
- 3) Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիցում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի բողնվել, որը կարող էր խեղաքյուրել այդ տեղեկատվության իմաստը: Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը.
- 4) Ծողարկողին կամ նրա կողմից բողարկված պարտատոմսերին շնորհված վարկանիշը՝ նշելով արդյո՞ք նման վարկանիշը շնորհվել է բողարկողի նախաձեռնությամբ, թե ոչ: Այստեղ պետք է ներկայացնել նաև այդ վարկանիշի համառոտ իմաստը:

Հավելված 10

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՄԱԾԱՑՅԱԼ ԱՐԺԵԹ-ՂԹԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱԽ ԱՌԴՎՈՐՆԵՐԸ

- Նշել պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար բողարկողի առողջական իրականացրած անկախ առողջական առողջական անվանումները և գտնվելու վայրերը: Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե որ մասնագիտական միություններին են անդամակցում այդ առողջական առողջական անվանումները,
- Եթե պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բողարկողի առողջական փոփոխվել են, հետացանց մորից չեն ընտրվել որպես առողջական ապա նշել դրա հիմնական պատճառները:

2. ՌԻՄԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- Այս մասում աշքի ընկնող ձևով բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք կարող են ազդել բողարկողի՝ արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման ունակության վրա: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի «ՌԻՄԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ» վերնագրի ներքո:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ

1) Թողարկողի պատմությունը և զարգացումը

Այստեղ ներկայացվում են.

- Բողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը: Եթե բողարկողի կանոնադրությամբ տրված են բողարկողի անվանման տարրերակներ օտար լեզուներով, նշվում են նաև դրանք: Եթե բողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ բողարկողը վերակազմակերպվել է, ապա ազատ ոճով ներկայացնել այդ մասին տեղեկատվություն:
- Բողարկողի պետական գրանցման վայրը և համարը,
- ստեղծման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը (եթե հնարավոր է որոշել),
- բողարկողի գտնվելու վայրը, բողարկողի հիմնադրման երկիրը, կանոնադրությամբ նշված գտնվելու վայրը, փաստացի գործունեություն ծավալելու վայրը, եթե տարրերվում է կանոնադրությամբ նշված գտնվելու վայրից, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ), ինտերնետային կայքը,
- բողարկողի հետ վերջին շրջանում տեղի ունեցած այն դեպքերը, որոնք

ողամբ ներդրողը կկարևորեր թողարկողի իրացվելիության մասին գնահատական կազմելու տեսանկյունից:

2) Ներդրումները

Այստեղ ներկայացվում են.

- ա. պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը կատարված էական ներդրումների նկարագիրը.
- բ. տեղեկատվություն թողարկողի ապագա էական այն ներդրումների մասին, որոնց կատարման ուղղությամբ թողարկողի կառավարման համապատասխան մարմինները ստանձնել են պարտավորություն, ինչպես նաև այս ներդրումների կատարման համար նախատեսվող աղբյուրները:

4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Հիմնական գործունեությունը

Այստեղ ներկայացվում են.

- ա. թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը՝ նշելով վաճառվող հիմնական ապրանքները կամ մատուցված ծառայությունների հիմնական տեսակները (ապրանքների և ծառայությունների մեծ տեսականու առակայության պարագայում ապրանքներն ու ծառայությունները կարելի է ներկայացնել խմբավորված),
- բ. արդյո՞ք նախատեսվում է նոր ապրանքների արտադրություն կամ նոր ծառայությունների մատուցում:

2) Հիմնական շոկաները

Այստեղ ներկայացվում են.

- ա. թողարկողի ապրանքների սպառման և ծառայությունների մատուցման հիմնական շոկաների նկարագիրը,
- բ. Թողարկողի մրցակցային դիրքի նկարագրությունը:

5. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Եթե թողարկողը խմբի անդամ է, ապա համառոտ ներկայացնել խմբի կառուցվածքը և թողարկողի տեղը այդ խմբում:

6. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- 1) Ներկայացնել տեղեկատվություն թողարկողի տրամադրության տակ գտնվող և մոտակայում պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների (շենքեր, շինություններ, հողամաս, սարք, սարքավորում և այլն) վերաբերյալ, ներառյալ վարձակալությամբ վերցված գույքը: Եթե որևէ հիմնական միջոց ընկերությանը սեփականության իրավունքը չի պատկանում, կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է (մասնավորապես՝ եթե գրավ է դրված), ապա համառոտ ներկայացվում են այդ հիմնական միջոցի օգտագործման պայմանները և (կամ) օգտագործման սահմանափակումների բնույթը: Հիմնական միջոցը համարվում է էական մեծություն կազմող, եթե դրա արժեքը գերազանցում է թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը:
- 2) Նկարագրել արդյո՞ք հնարավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել թողարկողի կողմից հիմնական միջոցների օգտագործումը:

7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում են թողարկողի արտադրած ապրանքների և մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները, դրանց ինքնարժեքի և վաճառքի գների միտումները վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար։ Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք էական են և (կամ) ողջամիտ ներդրող կկարևորեք ներդրումային որոշումներ կայացնելիս։

8. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Եթե թողարկողը որոշում է ազդագրում ներառել շահույթի կանխատեսումներ կամ գնահատումներ, ապա ներկայացնում է հետևյալ տեղեկատվությունը։

- 1) այն հիմնական սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը։ Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համարելի լինի թողարկողի պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հետ,
- 2) տարանջատված նկարագրվում են այն գործոնները, որոնց վրա թողարկողի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն և այն գործոնները, որոնց վրա ազդելու նման հնարավորությունը բացակայում է, ընդ որում, նկարագրությունը պետք է շարադրվի ներդրողի համար մատչելի լեզվով։

9. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԻ ԱՌԱՄՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում է.

- 1) թողարկողի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները,
- 2) կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, գրացեղրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, ինչ գործունեություն են ծավալում նրանցից յուրաքանչյուրը թողարկողի կազմից դրւս՝ ազդագրի գրանցման ներկայացման պահին։ Այս տեղեկատվությունը ներկայացվում է ըստ յուրաքանչյուր կառավարման մարմնի։ Եթե ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պատվիրակվել կամ փոխանցվել են առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի), ապա ներկայացնել այդ անձի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը),
- 3) Արյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև։ Եթե այս, ապա պարզ ձևով նկարագրել այդ։ Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին։

10. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 1) Առկայության դեպքում ներկայացնել թողարկողի առլիտի կոմիտեի մասին տեղեկատվություն, ներառյալ կոմիտեի անդամների անունը, ազգանունը և

կոմիտեի իրավասությունները և պարտականությունները: Սովորաբար նման կոմիտեները կազմված են լինում քողարկողի կառավարման մարմինների անդամներից և ստեղծվում են կոնկրետ խնդիրների լուծման նպատակով,

- 2) Նշել արդյո՞ք քողարկողը բավարարում է իր ստեղծման երկրում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (նման սկզբունքների առկայության դեպքում):

11. ՀՄԿՈՂ ԱՆՁԻՆՔ

Այստեղ ներկայացվում է, այնքանով, որքանով հայտնի է քողարկողին, տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք քողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այս, նշել հսկողների անվանումը (անունը ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում քողարկողին):

12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՄԵՐԻ ՍԱՄԲՆ

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում են պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ առողջտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ առողջտորական եզրակացության բովանդակությունն ամրողությամբ (ցանկության դեպքում կարելի է ներկայացնել այդ եզրակացության պատճենը): Պարտատոմսի դեպքում ֆինանսական հաշվետվությունների կազմում քողարկողն իր հայեցողությամբ կարող է չներառել սեփական կապիտալուն փոփոխությունների մասին հաշվետվությունը:

2) Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Եթե ազդագիրը գրանցման է ներկայացվում վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ առողջտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները) վերջին օրվանից սկսած 9 ամսից հետո, ապա ազդագրում ներկայացվում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (եռամսյակային կամ կիսամյակային՝ կախված քողարկողի ցանկությունից), որոնք ծածկում են տարվա սկզբից առնվազն 6 ամսի ժամանակաշրջան: Այս միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել առանց առողջտորական եզրակացության:

3) Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Եթե ազդագրում ներառված վերջին (ամենաքայլը) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել քողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն, ապա տալ դրա նկարագիրը:

4) Դատական, արքիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Այս մասում ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների լնթացքում քողարկողի ներգրավվածությամբ այն բոլոր դատական, արքիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների նկարագիրը (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին

թողարկողը տեղյակ է), որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

13. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Կանոնադրական կապիտալ

Այս մասում ներկայացվում է ներքոհիշյալ տեղեկատվությունը՝ ըստ պատմական ֆինանսական վերջին ժամանակաշրջանի հաշվապահական հաշվեկշռի.

ա. կանոնադրական կապիտալի մեծությունը

բ. հայտարարված բաժնետոմսերի (բաժնեմասերի) քանակը.

գ. թողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի (բաժնեմասերի) քանակը, թողարկված բայց ոչ լրիվ վճարված բաժնետոմսերի (բաժնեմասերի) քանակը.

դ. մեկ բաժնետոմսի (բաժնեմասերի) անվանական արժեքը:

2) Կանոնադրությունը

Այս մասում ներկայացվում է թողարկողի նպատակը և գործունեության ոլորտը՝ նշելով, թե թողարկողի կանոնադրության որ մասում կարելի է գտնել դրանք:

14. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Այստեղ ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում թողարկողի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

15. ՓՈՐՁԱԳԵՏԻ, ԳՆԱՀԱՏՈՂԻ, ԽՈՐՃՐԴԱՏՈՒԻ ԿԱՄ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՍԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ազդագրի որևէ մասում օգտագործվել է հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք (եզրակացություն, հաշվետվություն, գնահատման ակտ և այլն), ապա ազդագրի այս մասում պետք է բացահայտվի այդ փաստը, այդ անձանց ինքնությունը (անունը ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը)), որակավորումը և արդյոք թողարկողի հետ փոխապակցված չէ: Այստեղ պետք է նշել նաև, թե ազդագրի ո՞ր մասում է օգտագործվել կամ ներկայացվել այդ կարծիքը:

Եթե ազդագրում ներառված որևէ տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիացում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի թողնվել, որը կարող էր խեղաքյուրել այդ տեղեկատվության իմաստը: Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը:

16. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այստեղ ներկայացվում է հայտարարություն այն մասին, որ ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճեն) մշտապես մատչելի են հանրությանը.

- 1) բողարկողի կանոնադրությունը,
- 2) փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ գնահատումները և վերլուծական նյութերը, որոնց պատրաստվել են բողարկողի պատվերով և որոնք կամ որոնց մի մասն օգտագործվել է ազդագրում:

Այստեղ պետք է նշել նաև, թե դրանցից յուրաքանչյուրն ինչպես է մատչելի դարձվում հանրությանը՝ էլեկտրոնային թե թղթային ձևով: Եթե էլեկտրոնային ձևով է մատչելի դարձվում, ապա նշել դրանց էլեկտրոնային հասցեները, իսկ եթե թղթային ձևով՝ ապա նշել համապատասխան հասցեները, որտեղից կարող են դրանք ձեռք բերվել:

Հավելված 11

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԲԱՆԿԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱԽ ԱՌԴԴՈՒՆԵՐԸ

- Նշել պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար բողարկողի (այսուհետ սույն հավելվածում նաև՝ բանկ) առողիտն իրականացրած անկախ առողիտորների անվանումները և գտնվելու վայրերը: Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե որ մասնագիտական միություններին են անդամակցում այդ առողիտորները:
- Եթե պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բողարկողի առողիտորները փոփոխվել են, հեռացվել են կամ նորից չեն ընտրվել որպես առողիտոր, ապա նշել դրա հիմնական պատճառները:

2. ՈՒԽԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐ

- Այս մասում ակնհայտորեն բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք կարող են ազդել բողարկողի՝ արժեքթերից բխող պարտավորությունների կատարման ունակության վրա: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի «ՈՒԽԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐ» վերնագրի ներքո:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՍԱՍԻՆ

1) Բանկի պատմությունը և զարգացումը

Այստեղ ներկայացվում են.

- բողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը: Եթե բողարկողի կանոնադրությամբ տրված են բողարկողի անվանման տարբերակներ օտար լեզուներով, նշվում են նաև դրանք: Եթե բողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ բողարկողը վերակազմակերպվել է, ապա ազատ ներկայացնել այդ մասին տեղեկատվություն:
- բողարկողի պետական գրանցման վայրը և համարը,
- ստեղծման ամսաթիվ և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը (եթե հնարավոր է որոշել),
- բողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ), ինտերնետային կայքը, բողարկողի հիմնադրման երկիրը, մասնաճյուղերի ցանցի նկարագիրը, ցանկության դեպքում այդ մասնաճյուղի գտնվելու վայրերը,
- բողարկողի հետ վերջին շրջանում տեղի ունեցած այն դեպքերը, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր բողարկողի իրացվելիության մասին գնահատական կազմելու տեսանկյունից:

4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Հիմնական գործունեությունը

Այստեղ ներկայացվում են.

- ա. քողարկողի հիմնական գործունեության նկարագիրը՝ նշելով մատուցված ծառայությունների հիմնական տեսակները,
- բ. արդյո՞ք նախատեսվում է նոր ծառայությունների մատուցում՝ համառոտ նկարագրելով դրանք:

2) Հիմնական շուկաները

Այստեղ ներկայացվում են.

- ա. քողարկողի ծառայությունների մատուցման հիմնական շուկաների նկարագիրը,
- բ. քողարկողի մրցակցային դիրքի նկարագրությունը:

5. ԲԱՆԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Եթե քողարկողը խմբի անդամ է, ապա համառոտ ներկայացնել խմբի կառուցվածքը և քողարկողի տեղը այդ խմբում:

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում են քողարկողի մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները և ծառայությունների սակագների միտումները վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք էական են և (կամ) որոնք ողջամիտ ներդրողը կարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

7. ԾԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Եթե քողարկողը որոշում է ազդագրում ներառել շահույթի կանխատեսումներ կամ գնահատումներ, ապա ներկայացնում է հետևյալ տեղեկատվությունը.

- 1) այն հիմնական սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի քողարկողի պատճական ֆինանսական ժամանակաշրջանի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հետ,
- 2) տարանջատված նկարագրվում են այն գործուները, որոնց վրա քողարկողի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն և այն գործուները, որոնց վրա ազդելու նման հնարավորությունը բացակայում է, ընդ որում, նկարագրությունը պետք է շարադրվի ներդրողի համար մատչելի լեզվով:

8. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Այստեղ ներկայացվում է.

- 1) բանկի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները,

- 2) կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, գրացելրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, ինչ գործունեություն են ծավալում նրանցից յուրաքանչյուրը բանկից դրս՝ ազդագրի գրանցման ներկայացման պահին: Այս տեղեկատվությունը ներկայացվում է ըստ յուրաքանչյուր կառավարման մարմնի: Եթե ընկերության գործադիր մարմնի լիազորությունները պատվիրակվել կամ փոխանցվել են առևտրային կազմակերպության (կառավարող կազմակերպության) կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի), ապա ներկայացնել այդ անձի անվանումը (անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը),
- 3) այն մասնաճյուղերի կառավարիչների անունը, ազգանունը, բնակության վայրը, գրացելրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, որոնցում կենտրոնացած է բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը,
- 4) Արդյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես քողարկողի կառավարման մարմնի անդամ քողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև: Եթե այս, ապա պարզ ձևով նկարագրել այդ: Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին:

9. ՀՄԿՈՂ ԱՆՁԻՆՔ

Այստեղ ներկայացվում է, այնքանով, որքանով հայտնի է քողարկողին, տեղեկատվություն այս մասին, թե արդյո՞ք քողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այս, նշել հսկողների անվանումը (անունը ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում քողարկողին):

10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՍԱՍԻՆ

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում են պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ առողջատորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ առողջատորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ (ցանկության դեպքում կարելի է ներկայացնել այդ եզրակացության պատճենը): Ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը: Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, բացառությամբ, եթե ազդագրով հայցվում է կարգավորվող շուկայում առևտրին բույլտվություն:

2) Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Եթե ազդագրիը գրանցման է ներկայացվում վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ առողջատորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններ) վերջին օրվանից սկսած 9 ամիս հետո, ապա ազդագրում ներկայացվում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (եռամյակային կամ կիսամյակային՝ կախված քողարկողի ցանկությունից), որոնք ծածկում են տարվա սկզբից առնվազն 6 ամիս ժամանակաշրջան: Այս միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են

լինել առանց առդիտորական եզրակացության: Ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը: Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, բացառությամբ, եթե ազդագրով հայցվում է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն:

3) Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Եթե ազդագրում ներառված վերջին (ամենաքարոշ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն, ապա տալ դրա նկարագիրը:

4) Դատական, արքիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Այս մասում ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում թողարկողի ներգրավածությամբ այն բոլոր դատական, արքիտրաժային և (կամ) վարչական վարույթների նկարագիրը (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին թողարկողը տեղյակ է), որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

11. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Այստեղ ներկայացվում են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դրւու կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

12. ՓՈՐՁԱԳԵՏԻ, ԳՆԱՀԱՏՈՂԻ, ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԿԱՄ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՍԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՑԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եթե ազդագրի որևէ մասում օգտագործվել է հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք (եզրակացություն, հաշվետվություն, գնահատման ակտ և այլն), ապա ազդագրի այս մասում պետք է բացահայտվի այդ փաստը, այդ անձանց ինքնությունը (անունը ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը)), որակավորումը և արդյոք թողարկողի հետ փոխակապակցված չէ: Այստեղ պետք է նշել նաև, թե ազդագրի ո՞ր մասում է օգտագործվել կամ ներկայացվել այդ կարծիքը:

Եթե ազդագրում ներառված որևէ տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիցում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի թողնվել, որը կարող էր խեղաքրյուղել այդ տեղեկատվության իմաստը: Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը:

13. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այստեղ ներկայացվում է հայտարարություն այն մասին, որ ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճենը) մշտապես մատչելի են հանրությանը.

- 1) Թողարկողի կանոնադրությունը,
- 2) Փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ գնահատումները և վերլուծական նյութերը, որոնց պատրաստվել են բողարկողի պատվերով և որոնք կամ որոնց մի մասն օգտագործվել է ազդագրում:

Այստեղ պետք է նշել նաև թե դրանցից յուրաքանչյուրն ինչ ձևով է մատչելի դարձվում հանրությանը՝ էլեկտրոնային, թե թղթային ձևով: Եթե էլեկտրոնային ձևով է մատչելի դարձվում, ապա նշել դրանց էլեկտրոնային հասցեները, իսկ եթե թղթային՝ ապա նշել համապատասխան հասցեները, որտեղից կարող են դրանք ձեռք բերվել:

Հավելված 12

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՎԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՌԻՄԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Այս մասում ակնհայտորեն բացահայտվում են այն ռիսկային գործոնները, որոնք անհրաժեշտ են առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտին բույլատրվող) ածանցյալ արժեթղթերի շուկայական ռիսկը գնահատելու համար: Այս տեղեկատվությունը պետք է ներկայացվի «ՌԻՄԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ» վերնագրի ներքո: Այստեղ պետք է ներկայացվի նախագծուշական դրույթ առ այն, որ, հնարավոր են դեպքեր, երբ ներդրողները կարող են կորցնել իրենց ներդրումը կամ դրա մի մասը: Եթե ներդրողի պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն իր ներդրման գումարով, ապա բացահայտել նաև դա, ինչպես նաև տալ այն հանգամանքների նկարագիրը, թե երբ կարող է առաջնայի այդ լրացուցիչ պատասխանատվությունը և այդ պատասխանատվության ֆինանսական ազդեցությունը:

2. ՀԻՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Այստեղ ներկայացվում է առաջարկի նպատակը և, հնարավորության դեպքում, հնարավոր ներգրավվող զուտ գումարների մեծությունը՝ բաժանված ըստ օգտագործման նախատեսվող ուղղությունների: Այդ ուղղությունները պետք է դասակարգել ըստ առաջնահերթության: Այստեղ զուտ գումար ասելով հասկանում ենք հավաքագրված համախառն գումարի և այդ գումարները հավաքագրելու համար կատարված ծախսերի տարրերությունը:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿԱՊՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ (ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ) ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՎԹԵՐԻ ՀԵՏ

1) Ածանցյալ արժեթղթերի մասին տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում են.

- Ածանցյալ արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ ածանցյալ արժեթղթի տարրերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարրերակիչ ծածկագիր (առկայության դեպքում),
- Պարզ, ամբողջական և համակողմանի բացատրություն, որը կօգնի ներդրողներին հասկանալ, թե ինչպես կարող է փոխվել իրենց ներդրման մեծությունը կախված ածանցյալ արժեթղթի հիմքում ընկած ակտիվի կամ ցուցանիշի մեծությունից,
- Երկիրը, որի օրենսդրության համաձայն են թողարկվել տվյալ ածանցյալ արժեթղթերը,
- Ածանցյալ արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային ածանցյալ արժեթղթերի դեպքում պետք է նշել այն

- իրավաբանական անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեքների ռեևստրը,
- ե. Ածանցյալ արժեքների անվանական արժեքը (առկայության դեպքում) և բողարկման արժույթը,
- գ. Առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) ածանցյալ արժեքների դասակարգման մասին տեղեկատվություն՝ բողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը): Ներկայացնել նաև տեղեկատվություն այն մասին, թե ինչ պայմանների դեպքում է հնարավոր այդ ածանցյալ արժեքների վերադասակարգումը:
- դ. Ածանցյալ արժեքներից բխող իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը,
- թ. Եթե առաջարկվող ածանցյալ արժեքները նոր բողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր բողարկման մասին,
- թ. Ածանցյալ արժեքների բողարկման օրը,
- ժ. Մարման կամ ժամկետը լրանալու օրը,
- Ժա. Իրականացման կամ հաշվարկի (վերջնահաշվարկ) օրը,
- Ժթ. Վերջնահաշվարկի գործընթացի նկարագիրը,
- Ժգ. Ինչպես է իրականացվում ածանցյալ արժեքներից օգուտի ստացումը, օգուտի վճարման կամ օգուտի մատակարարման օրը, ինչպես նաև այդ օգուտի հաշվարկման եղանակը,
- Ժդ. Ածացյալ արժեքների ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը,
- Ժե. Ածացյալ արժեքներից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը:

2) Հիմքում ընկած ակտիվի կամ ցուցանիշի մասին տեղեկատվություն

Այստեղ ներկայացվում են.

- ա. Հիմքում ընկած ակտիվի կամ ցուցանիշի իրականացման գինը կամ հաշվարկի գինը.
- թ. Հիմքում ընկած ակտիվի կամ ցուցանիշի վերաբերյալ ներքոհիշյալ տեղեկատվությունը.
1. որտեղից կարելի է ստանալ տեղեկատվություն հիմքում ընկած ակտիվի կամ ցուցանիշի վերջին ժամանակներս դրսուրած վարքագծի և տատանողականության մասին,
 2. եթե հիմքում ընկած ակտիվն արժեքություն է, ապա դրա բողարկողի անվանումը և արժեքների տարրերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարրերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում),
 3. եթե հիմքում ընկած ցուցանիշը ինդեքս է, ապա այդ ինդեքսի անվանումը և նկարագիրը, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե որտեղից կարելի է ստանալ տեղեկատվություն այդ ինդեքսի մասին,
 4. եթե հիմքում ընկած ցուցանիշը տոկոսադրույթ է, ապա դրա նկարագիրը,
 5. եթե հիմքում ընկած է այլ ակտիվ կամ ցուցանիշ, ապա դրա անվանումը և տեղեկատվություն այն մասին, թե որտեղից կարելի է ստանալ տեղեկատվություն դրանց մասին:

4. Առաջարկի ԺԱՍԿԵՏՆԵՐԸ և ՊԱՅՍԱՆԵՐԸ

- 1) Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից

օգտվելու համար

Այստեղ ներկայացվում են.

- ա. Թողարկման և(կամ) առաջարկի ընդհանուր ծավալը: Եթե բողարկման կամ առաջարկի ծավալը դեռևս որոշված չէ, նկարագրել, թե ինչ ժամկետներում կիրապարակվեն վերջնական ծավալի մասին տեղեկությունները, ինչպես նաև ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները,
- բ. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխություններ),
- շ. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրությունը, այսինք, նկարագրել թե ինչ քայլեր է պետք է ձեռնարկի այն անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և ներդրում կատարել ածանցյալ արժեքներում,
- դ. Այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում: Այդ սահմանաշափերը կարող են նշվել կամ որպես ածանցյալ արժեքների նվազագույն և առավելագույն թույլատրեկի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն թույլատրեկի համախառն գումարներ,
- ե. Ածանցյալ արժեքների դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշվեները և այլն) և ժամկետները, ինչպես նաև ածանցյալ արժեքները ստանալու մեթոդները և ժամկետները,
- շ. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը:

2) Տեղաբաշխման պլանը

Այստեղ ներկայացվում են.

- ա. Ներդրողների որ խմբերին է ուղղված առաջարկը (հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին, երկիրը, տարածաշրջանը և այլն): Եթե առաջարկը միանգամից արվում է 2 և ավելի երկներում և որոշակի տրանշ նախատեսված է կոնկրետ այդ երկների համար, ապա պետք է նկարագրել դա,
- բ. Ինչպես են ներդրողները տեղեկացվում իրենց հայտերի բավարարման մասին.

3) Առաջարկի գինը

Այստեղ ներկայացվում է այն գինը, որով ածանցյալ արժեքներն առաջարկվելու են: Եթե գինը դեռևս հայտնի չէ, պետք է նշել առաջարկի առավելագույն գինը և վերջնական գնի որոշման մեթոդը կամ պայմանները, ինչպես նաև առաջարկի գնի բացահայտման գործընթացի նկարագրությունը: Այստեղ պետք է ներկայացնել նաև այն ծախսերը և հարկերը, որոնք գանձվելու են բաժանորդագրվողից կամ գնորդից:

4) Տեղաբաշխումը

Այստեղ ներկայացվում են.

- ա. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք իրականացնում են երաշխավորված տեղաբաշխում (անդերօպայթինգ),
- բ. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք իրականացնում են չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում,
- շ. երբ է կնքվել կամ նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերօպայթինգի) պայմանագիրը,
- դ. այն բանկերի անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է վճարում կատարել ածանցյալ արժեքների դիմաց, ինչպես նաև այն պահառուների

անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ կարելի է արժեքորերի հաշիվ բացել:

5. ԱՌԵՎԱՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎԱՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Այստեղ ներկայացվում են.

- 1) արդյո՞ք առաջարկվող արժեքորերի մասով հետազայում հայցվելու է կարգավորվող շուկայում (նշել նաև շուկայի անվանումները) առևտրին թույլտվություն: Այստեղ պետք է նշել, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Եթե հնարավոր է, պետք է նաև նշել առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը,
- 2) այն շուկաների անվանումները (այնքանով, որքանով դրանք հայտնի են թողարկողին), որտեղ առաջարկվող ածանցյալ արժեքորերի նույն դասը կամ առևտրին թույլտվության առարկա արժեքորերի նույն դասն արդեն իսկ թույլատրված են առևտրին,
- 3) այն անձանց անվանումները, որոնք ունեն պարտավորություն առաջարկվող կամ առևտրին թույլտվության առարկա ածանցյալ արժեքորերի մասով ապահովել իրացվելիություն երկրորդային շուկայում (հանդիսանալ շուկա ստեղծող՝ ներկայացնելով այդ պարտավորության հիմնական պայմանները):

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ

- 1) Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության հետ կապված ներգրավված է երել որևէ խորհրդատու, ապա նշել այդ խորհրդատուի իրավասությունների շրջանակը,
- 2) Ներկայացնել տեղեկատվություն, թե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության որ մասն է թողարկողի անկախ առողջորդ առողջիսի ենթարկել և արդյո՞ք այդ մասով առկա է առողջորդական եզրակացություն: Եթե առկա է եզրակացությունը, ապա ներկայացնել այդ եզրակացության համառոտ բովանդակությունը կամ շարադրել այն ամբողջությամբ,
- 3) Եթե սույն հավելվածի համաձայն ներկայացվող տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձինք, ապա պետք է ներկայացնել հավաստիցում առ այն, որ այդ երրորդ անձանց տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել ազդագրում և որևէ փաստ բաց չի թողնվել, որը կարող էր խեղաքայլութել այդ տեղեկատվության իմաստը: Պետք է ներկայացնել նաև նման տեղեկատվության աղբյուրը,
- 4) Նշել, թե արդյո՞ք թողարկողը մտադիր է ապահովել տեղեկատվության շարունակական բացահայտում: Եթե թողարկողը նշում է, որ ունի նման մտադրություն, ապա պետք է նշի նաև, թե ինչ տեղեկատվություն է բացահայտելու և որտեղ կարելի է ստանալ այդ տեղեկատվությունը:

ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (14-րդ գլխում սահմանված դեպքերի համար)

Նկարագրել հիմքում ընկած բաժնետոմսը, մասնավորապես

1. Բաժնետոմսերի տեսակը և դասը,
2. Երկիրը, որի օրենսդրության համաձայն են բողարկվել տվյալ բաժնետոմսերը,
3. Բաժնետոմսերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային բաժնետոմսերի դեպքում պետք է նշել այն անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային բաժնետոմսերի ռեեստրը,
4. Թողարկման արժույթը,
5. Բաժնետոմսերից բխող ներքոհիշյալ իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը, մասնավորապես՝
 - 1) Շահութաբաժնի ստացման իրավունքները (շահութաբաժնի ստացման կոնկրետ օրերը, շահութաբաժնի ստանալու սահմանափակումները և ոչ ռեզիլենտների կողմից ստացման գործընթացը, շահութաբաժնի հաշվարկման մեթոդները, վճարման պարբերականությունները և մեթոդները),
 - 2) Զայնի իրավունքները,
 - 3) Նույն դասի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքները,
 - 4) Ընկերության շահույթում մասնակցության իրավունքները,
 - 5) Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները,
 - 6) Հետզննան պահանջի իրավունքները,
 - 7) Փոխարկման իրավունքները:
6. Եթե հիմքում ընկած բաժնետոմսերը նոր բողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր բողարկման մասին,
7. Երբ և արտեղ են բաժնետոմսերը թույլատրված կամ թույլատրվելու են առևտիք,
8. Բաժնետոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը,
9. Բաժնետոմսերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորության նկարագրությունը, ինչպես նաև այն դեպքերի նկարագրությունը, երբ նման պարտավորությունը բացակայում է,
10. Բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը:

Հավելված 14

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Քանի որ սովորաբար երաշխավորությունները նախատեսում են պարտատոմսերի և (կամ) տոկոսների վճարման պարտավորությունների երաշխավորում, ինչպես նաև այլ պարտավորությունների երաշխավորում, ապա այստեղ պետք է մանրամասն նկարագրել, թե ինչպես է այդ երաշխավորումը պատշաճ և ժամանակին կատարվելու:

2. ԵՐԱԾԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Մանրամասն նկարագրել երաշխավորության շրջանակը, պայմանները և ժամկետները: Այստեղ պետք է նկարագրել, թե երաշխավորության պայմանագրի որևէ պայմանի խախտման դեպքում ինչ է նախատեսված պայմանագրով:

3. ԵՐԱԾԽԱՎՈՐԻ ՍԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այստեղ երաշխավորը պետք է բացահայտի իր մասին Հավելված 8-ով, Հավելված 10-ով կամ Հավելված 11-ով սահմանված տեղեկատվությունը՝ կախված այն բանից թե ինչ տեսակի արժեքութերով նախատեսված պարտավորություններ են երաշխավորել երաշխավորը: Եթե երաշխավորը ֆիզիկական անձ է, ապա սույն կետում նշված տեղեկատվությունը բացահայտվում է ըստ կիրառելիության:

4. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այստեղ նշվում են այն վայրերը կամ միջոցները, որտեղ հասարակությանը հասու կլինեն երաշխավորությանը վերաբերվող էական պայմանագրերը և այլ փաստաթղթեր:

Հավելված 15

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԱԶԴԱԳՐԻ (ԱՌԵՎԼՏԻ ԱԶԴԱԳՐԻ) ԳՐԱՆՑՈՒՄՆ ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
-----ին

Հարգելի -----

Խնդրում ենք գրանցել ----- ազգագիրը (առևտրի
ազդագիրը):

(կազմակերպության անվանումը)

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝
կից ներկայացնում ենք ազգագրի (առևտրի ազդագրի) գրանցման համար անհրաժեշտ
փաստաթղթերը:

Առջիր՝ --- էջ:

Հայտը ներկայացնող անձ՝

(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, կապի միջոցները)

Հավելված 16

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազրագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ -----ին

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՍԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ

Հարգելի -----

Խնդրում եմ հարգել կից ներկայացվող հետևյալ տեղեկատվության (փաստաթղթերի) գաղտնիությունը.

Հ/հ	Կից ներկայացվող տեղեկատվության (փաստաթղթերի) ցանկը	Էջերի քանակը	Ազրագրի (առևտրի ազդագրի) անվանումը և ներկայացման ամսաթիվը, որում բաց թողնված է տվյալ տեղեկատվությունը (փաստաթուղթը)	Ժամանակահատվածը, որի ընթացքում կից ներկայացվող տեղեկատվությունը (փաստաթուղթը) համարվում է գաղտնի (օր/ամիս տարի)

Մանրամասն հիմնավորում, թե ինչու և ինչ հանգամանքների առկայության պատճառով է կից ներկայացվող տեղեկատվության (փաստաթղթի) հրապարակման (բացահայտման) բացառումն անհրաժեշտ
Անձի անունը, ազգանունը և հեռախոսի համարը, ում հետ կարելի է կապվել ներկայացվող տեղեկատվության կամ փաստաթղթի առնչությամբ

(դիմողի անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հավելված 17

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68 Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու բողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի

ԱՐԺԵԹՎԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽԱՄԱՆ ՍԱՍԻՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղաբաշխման ընթացքի վերաբերյալ

Տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ

թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը (անունը, ազգանունը)

թողարկողի գումարներու վայրը և փոստային հասցեն, կայի միջոցները

Արժեթղթի դասը (տեսակը)

Հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը / ____ / ____ / ____
(ամսաթիվը)

ավարտը / ____ / ____ / ____
(ամսաթիվը)

Տեղաբաշխման ժամկետները՝ սկիզբը / ____ / ____ / ____

ավարտը / ____ / ____ / ____
(ամսաթիվը)

ՎԱճԱՌՎԱԾ ԱՐԺԵԹՎԹԵՐ

Վճարման ձևը	Միանվագ վճարում		Տարաժամկետ վճարում	
	քանակը	գումարը (նշելով արժույթը)	քանակը	իաստացի վճարված գումարը (նշելով արժույթը)
ՀՀ արժույթով				
արտարժույթով				
գույքով՝				
այդ թվում արժեթղթերով				

Վաճառված արժեթղթերի ընդհանուր քանակը -----

Հրապարակային տեղաբաշխման գինը՝ նշելով արժույթը -----

Վաճառված արժեթղթի միջին գինը՝ նշելով արժույթը -----

Պատասխանատու անձ՝ ----- ----- -----

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

(ստորագրություն)

----- ----- 200 թ.

Կ.Տ.

Եթե արժեթղթերի դիմաց վճարումները կատարվել են մեկից ավելի արժույթով, ապա վաճառված արժեթղթերի միջին գինը և հրապարակային տեղաբաշխման գինը անհրաժեշտ է նշել ըստ յուրաքանչյուր արժույթի: